ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է ՀՀ վիճակագրության
պետական խորհրդի 26.07.2001թ. № 59 որոշմամբ

ՀՐԱՀԱՆԳ

Հայաստանի Հանրապետության 2001թվականի մարդահամարի հարցաթերթը լրացնելու (մարդահամարն անցկացնելու) կարգի մասին

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 26.07.2001թ.№59 որոշմամբ

ՀԱՐՑԱԹԵՐԹ № □□□

<< 2001 թվականի հոկտեմբերի 10-19-ը «Մարդահամարի մասին» << օրենքի համաձայն անցկացվող մարդահամարն առաջին է մեր երկրի պատմության մեջ, որ իրականություն է դառնում անկախության պայմաններում:

Մարդահամարի նպատակը ոչ միայն բուն << վարչատարածքային բաժանման հանրապետության բնակչության թվաքանակի և կազմի պարզումն է, այլև մարդահամարային ամփոփ ցուցանիշների օգնությամբ հասարակությանն ու քաղաքական վճիռներ կայացնող առյաններին ավելի որակյալ որոշումներ կայացնելուն օժանդակելը, մեր զարգացումների պատկերների ուղղությամբ կանխատեսումները հստակեցնելը:

Հարցաթերթի հարցերին Ձեր պատասխանների անկախությունի և հավաստիության ապահովման նպատակով «Մարդահամարի մասին» << օրենքը սահմանել է, որ մարդահամարի վերջնական արդյունքները կարող են օգտագործվել և հրապարակվել միայն ամփոփված և խմբագրված տեսքով: Անհատական բնույթի տվյալները գաղտնի են և հրապարակման ենթակա չեն, և անգամ չեն կարող որպես ապացույց օգտագործվել դատական, դատաքննչական և այլ մարմինների կողմից (հոդված 12 և 13):

Մարդահամարը կրում է պարտադիր բնույթ (հոդված 10), և բոլորիս պարտքն է Հայաստանին: Ձեր անկախությունն և հանձնարարությունները խնդրում ենք ստանալ << 2001 թվականի մարդահամարի անցկացմանը, որպեսզի շատ կարևոր են մեր երկրի ապագայի ուղղությունները հստակեցնելու համար:

Շնորհակալություն- համագործակցության համար

Ստեփան Մնացականյան
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահ,
ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության ղեկավար

Մարդահամարի տնդամաս ___

Հրահանգչական տնդամաս ___

Հաշվային տնդամաս ___

Բնակելի միավոր № □□□

Մարզ _____

Տարածք _____

Համայնք _____

Բնակավայր _____

Ղեկավար, փողոց,նրբանցք _____

Տան/շենքի համարը կամ Տարածքը ազգանունը _____

Բնակարանի համարը ___ Հնգանոսի համարը ___

Կազմակերպության անվանումը _____

Հաշվառող . . . . /ստորագրությունը/ . . . /լրացման անունը/ . .

Հրահանգիչ-հսկիչ . . . /ստորագրությունը/ . . . /ստուգման անունը/ . .

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Հաստատված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 26.07.2001թ. № 59 որոշմամբ

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ 2001

ՀՐԱՀԱՆԳ

Հայաստանի Հանրապետության 2001թվականի մարդահամարի հարցաթերթը լրացնելու (մարդահամարն անցկացնելու) կարգի մասին

Երևան 2001 թ.

Բովանդակություն

էջ

Նախաբան

Ընդհանուր դրույթներ.....9

Իրականացվող վերահսկիչ միջոցառումներ.....14

Ընդհանուր տեղեկություններ մարդահամարի հարցաթերթի լրացման մասին.....19

Բաժին Ի՝ Հասցեամասի լրացման կարգը 11

Բաժին II՝ Ցուցումներ մարդահամարի հարցաթերթի անհատական հարցերի պատասխանները լրացնելու կարգի մասին.....22

Հարց 1: Տնային տնտեսության անդամների ազգանունը, անունը, հայրանունը 23
Հարց 2: Անձի բնակության կատեգորիան մարդահամարի հաշվառման պահին.....24
Հարց 3: Բացակայության կամ ժամանակավոր գտնվելու տևողությունն ամիսներով.....25
Հարց 4: Բացակայության պատճառը կամ ժամանակավոր գտնվելու նպատակը 26
Հարց 5: Բացակայողի համար՝ Ո՞ւր է գտնվել մարդահամարի հաշվառման պահին.....26
Հարց 6: Ժամանակավոր գտնվող անձի համար՝ Ո՞ւր է սովորաբար բնակվում.....27
Հարց 7: Ազգակցական կապը առաջինը գրված անձի նկատմամբ 27
Հարց 8: Սեռը.....28
Հարց 9: Ծննդյան օրը, ամիսը, տարին.....29

Հարց 10: Ծննդավայրը.....30
Հարց 11: Քաղաքացիության երկիրը.....30
Հարց 12: Ազգությունը.....30
Հարց 13: Մայրենի լեզու և այլ լեզու, որին ազատ տիրապետում է.....31
Հարց 14: Ծննդյան օրից տվյալ բնակավայրում անընդհատ բնակվելը.....31
Հարց 15: 1988 թ.սկսած բնակության վայրը փոխած անձանց համար՝ ստիպվա՞ծ են եղել փոխել այն.....32
Հարց 16: Նախորդ բնակության վայրը.....33
Հարց 17: Տարեթիվը, որից սկսած անընդհատ բնակվում է այդ բնակավայրում.....33
Հարց 18: Գոյության միջոցների աղբյուրները.....33
Հարց 19: Գիտական աստիճանը կամ կրթությունը.....36
Հարց 20: Տարրական կրթություն չունեցողների համար՝ արդյո՞ք տառաճանաչ է.....38
Հարց 21: Որևէ ուսումնական հաստատությունում սովորելը.....38
Հարց 22: Կանանց համար՝ քանի՞ երեխա է ծննդաբերել.....39
Հարց 23: Նրանցից քանի՞սն են ողջ.....40
Հարց 24: Ամուսնական վիճակը.....40
Հարց 25: Հոկտեմբերի 3-9-ը աշխատանք ունեցե՞լ են, թե ոչ....41
Հարց 26: Հիմնական աշխատատեղի գործունեության տեսակը.....42
Հարց 27: Զբաղմունքը հիմնական աշխատատեղում.....45
Հարց 28: Հիմնական զբաղվածության կարգավիճակը.....46
Հարց 29: Աշխատանք փնտրելը.....48
Հարց 30: Պատրա՞ստ է անցնել աշխատանքի առաջիկա երկու շաբաթում.....49
Հարց 31: Առաջին անգա՞մ է աշխատանք փնտրում.....49
Հարց 32: Եթե աշխատանք չի փնտրում, ապա ո՞րն է պատճառը.....49

Բաժին III՝ Տնային տնտեսության բնակության պայմանները.....50

Բ 1: Բնակելի միավորով ապահովվածությունը..... 50
Բ 2: Բնակելի շինության տեսակը.....51

Բ 3: Կառուցման տարնթիվը.....52
Բ 4: Շինության արտաքին պատերի
շինանյութը.....53
Բ 5: Ջնռուցման հիմնական աղբյուրը.....53
Բ 6: Կնրակուր պատրաստելու հիմնական վառելիքը.....54
Բ 7: Ջրամատակարարման հիմնական աղբյուրը 54
Բ 8: Լոգասենյակի կամ ցնցուղի առկայությունը.....55
Բ 9: Զուգարանի առկայությունը. 55
Բ 10: Ինչպե՞ս է կատարվում աղբահանումը.....56
Բ 11: Լուսավորման հիմնական աղբյուրը..... 56
Բ 12: Հեռախոսի առկայությունը..... 56
Բ 13: Ու՞մ սեփականությունն է բնակելի միավորը 57
Բ 14: Զբաղեցրած սենյակների քանակը.....57
Բ 15: Բնակելի միավորի մակերեսը.....58

Հավելված 1: Օժանդակ աղյուսակ ծննդյան հայտնի
տարեթվով տարիքը՝ լրացած տարիներով
որոշելու համար 63

Հավելված 2: Օժանդակ աղյուսակ միջնակարգ (լրիվ)
ընդհանուր չստացած անձանց կրթական
մակարդակը որոշելու.....64

Հավելված 3: Ձև 4 «Հսկիչ թերթ».....65

Հավելված 4: Ձև 5 «Տեղեկանք ՀՀ 2001 թ.
մարդահամարն անցնելու մասին».....67

Հավելված 5: Ձև 6 «Վերահսկիչ փաստաթուղթ».....69

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հրահանգը մշակվել է՝ հիմք ընդունելով «Պետական վիճակագրության մասին» և «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում 2001 թվականին մարդահամար անցկացնելու մասին» 2000թ. փետրվարի 19-ի թիվ 78 որոշումը, ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի 04.04.2001թ. թիվ 34 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթները», ինչպես նաև, մարդահամարների անցկացման միջազգային ստանդարտները («Առաջարկություններ 2000թ. շրջանակներում Եվրոպական տնտեսական հանձնաժողովի ռեգիոնի անդամ երկրներում մարդահամարների և կացարանների հաշվառման վերաբերյալ», ՄԱԿ, 1998, «Մարդահամարների և բնակարանային ֆոնդի հաշվառման հետ առնչվող սկզբունքներ և առաջարկություններ» ՄԱԿ, 1999): Սույն հրահանգը նպատակ ունի պարզաբանելու 2001թ. հոկտեմբերի 10-ից 19-ն անցկացվող մարդահամարի անցկացման և հարցաթերթի լրացման կարգը:

Ընդհանուր դրույթներ

1. ՀՀ 2001թ. մարդահամարն անցկացվում է հոկտեմբերի 10-19-ը ներառյալ: Մարդահամարի փաստաթղթերի լրացումը՝ տվյալների հավաքագրումը հաշվարարների կողմից սկսվում է հոկտեմբերի 10-ի առավոտյան ժամը 8-ից և շարունակվում է 10 օր՝ մինչև հոկտեմբերի 19-ը ներառյալ: Մարդահամարի կարևորագույն հատկանիշներից մեկը տեղեկությունների հավաքագրման միաժամանակությունն է: Բնակչությունն ամբողջ հանրապետությունում հաշվեգրվում է, հնարավորության սահմաններում, միևնույն հստակ սահմանված պահի դրությամբ, որը կոչվում է հաշվառման (կրիտիկական) պահ: ՀՀ 2001թ. մարդահամարի համար այն սահմանվել է մարդահամարի առաջին օրվա՝ հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերը՝ 00 ժամը: Այսինքն, մարդահամարի հարցաթերթում չպետք է հաշվեգրվեն կրիտիկական պահից հետո ծնված երեխաները և պետք է հաշվեգրվեն նշված պահից հետո մահացած անձինք, ովքեր դեռևս ողջ են եղել այդ պահի դրությամբ:

2. Մարդահամարն անցկացվում է հաշվարարների կողմից շրջագայելով իրենց տեղամասում տեղակայված բոլոր տները, շենքերը, շինությունները (ներառյալ՝ հիմնարկների, կազմակերպությունների կողմից զբաղեցրածները), որտեղ բնակվում կամ կարող է բնակվել բնակչություն: Մարդահամարի հարցաթերթի հարցերի պատասխանները հաշվարարները լրացնում են հարցվողների բանավոր պատասխաններով:

3. Բնակչությունը հաշվեգրվում է ըստ բնակության վայրի, ներառյալ՝ ժամանակավոր բնակության, այլ ոչ թե ըստ աշխատանքի կամ ծառայության վայրի:

4. Յուրաքանչյուր տանը (շինությունում) մարդահամարի հարցաթերթում հաշվեգրվում են հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերվա դրությամբ այնտեղ բոլոր բնակվողները՝ ներառյալ մարդահամարի հաշվառման պահի դրությամբ բացակայողները և ժամանակավոր ներկաները:

Դրան համապատասխան մարդահամարի հարցաթերթում գրանցվում են.

ա) տվյալ տանը (շինությունում) մշտապես (սովորաբար) բնակվող տնային տնտեսության բոլոր անդամները, ներառյալ՝ բացակայողները,

բ) տվյալ տանը (շինությունում) ժամանակավոր ներկաները (իջևանածները), որոնց մշտական բնակավայրը տվյալ համայնքի (քաղաքային, գյուղական) սահմաններից դուրս է,

գ) տվյալ տանը (շինությունում) բոլոր բնակվողները, ովքեր մշտական բնակության այլ վայր չունեն:

Մշտական բնակավայր որպես կանոն համարվում է աշխարհագրական այն վայրը՝ քաղաք, գյուղ, տուն, բնակարան, որտեղ հարցվողը մշտապես (սովորաբար) անցկացնում է իր ժամանակի մեծ մասը (որպես կանոն գիշերում է): Այդ վայրը կարող է համընկնել կամ չհամընկնել հարցվողի գրանցման (հաշվառման) հասցեի հետ:

Որպես բացակայողներ հաշվեգրվում են.

ա) այն անձինք, ովքեր մշտապես (սովորաբար) բնակվում են տվյալ տանը (շինությունում), սակայն մարդահամարի հաշվառման պահին գտնվել են տվյալ քաղաքի կամ գյուղական համայնքի սահմաններից դուրս, անկախ բացակայության ժամկետից (սեզոնային կամ ժամանակավոր աշխատանքի, գործուղման, արձակուրդ, արտադրական պրակտիկայի, ազգականների կամ ծանոթների մոտ հյուր գնացածները):

բ) այն անձինք, ովքեր մարդահամարի հաշվառման պահին բուժման և այլ համանման նպատակով՝ գտնվում են հիվանդանոցներում, ծննդատներում, առողջարաններում կամ հանգստյան տներում (բացի մեկ-երկու օրով հանգստյան տներում հանգստացողները), ինչպես նաև, գիշերօթիկ դպրոցներում (բացի դրանցում մշտապես բնակվողները), և դպրոցներին կից գիշերօթիկներում սովորողները, եթե հիվանդանոցը, առողջարանը, հանգստյան տունը, ծննդատունը, նշված դպրոցը կամ դպրոցին կից գիշերօթիկը գտնվում է տվյալ համայնքի (քաղաքային, գյուղական) սահմաններից դուրս:

Բացակայողներ չեն այդ շինությունում մշտապես բնակվող այն անձինք, ովքեր հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերին տանը չեն եղել, սակայն գտնվել են այդ քաղաքի կամ գյուղական համայնքի տարածքում (օրինակ հյուր են գնացել) կամ գտնվել են տվյալ համայնքի սահմաններից դուրս, բայց չեն կարողացել հաշվեգրվել հետևյալ պատճառներից մեկի դեպքում.

ա) աշխատել են գիշերային հերթափոխում, գտնվել են պահակակետերում կամ հերթապահության մեջ, կամ գիշերը կատարվող որևէ այլ աշխատանքում,

բ) գտնվել են պաշտոնեական պարտականությունների կատարման մեջ, եթե նույնիսկ բացակայությունը տևել է մի քանի օր և կանգ չեն առել այն վայրերում, որտեղ կարող էին հաշվեգրվել (երկաթուղա-

յին, օդային և ավտոմոբիլային տրանսպորտի աշխատողները, ուղևորներ, բեռներ, փոստ, անասունների նախիր, հոտ կամ այլ խումբ ուղեկցող անձինք),

գ) գտնվել են մեկ-երկու օրյա հանգստյան տներում, ճանապարհին եղել են տրանսպորտային միջոցներում՝ որպես ուղևոր կամ վարորդ և այլն,

դ) *մեկ ամսից պակաս* ժամկետով մեկնել են արտասահման՝ գործուղման, հանգստանալու, բուժվելու, հյուր են գնացել հարազատների կամ ծանոթների մոտ, շրջագայել են որպես զբոսաշրջիկներ, ուխտագնացներ, լեռնագնացներ, ճամբարաբնակներ, վրանաբնակներ,

ե) ռազմավարժական հավաքի զորակոչված անձինք (անկախ ժամկետից) և կալանավայրերում նախնական կալանքում գտնվող անձինք, ինչպես նաև մինչև 15 օր ժամկետով վարչական կարգով ձերբակալվածները,

զ) անձինք, որոնց նկատմամբ ոչ ավելի քան մեկ ամիս առաջ հայտարարվել է հետախուզում:

Որպես ժամանակավոր ներկա հաշվեգրվում են այն անձինք, ովքեր մարդահամարի հաշվառման պահին գտնվել են տվյալ համայնքում՝ տանը (շինությունում), սակայն նրանց մշտական բնակավայրը գտնվում է այդ համայնքի (քաղաքային, գյուղական) սահմաններից դուրս, և նրանց այդտեղ գտնվելու տևողությունը, նշված պահի դրությամբ, չի գերազանցում մեկ տարուց: Մասնավորապես.

ա) գործուղման, ժամանակավոր կամ սեզոնային աշխատանքի, արտադրական պրակտիկայի, արձակուրդ (դպրոցական կամ ուսանողական), ազգականների և ծանոթների մոտ հյուր եկածները, եթե նրանց բացակայությունը մշտական բնակավայրից չի գերազանցում մեկ տարուց,

բ) հյուրանոցներում գտնվողները (բացի դրանցում մշտական բնակվողներից և այն անձանցից, ովքեր չեն կարող նշել այլ մշտական բնակավայր):

գ) ավտոբուսային և երկաթուղային կայարաններում, ինչպես նաև օդանավակայաններում՝ հեռավոր ուղևորության մեկնելու սպասող ուղևորները:

Այն անձինք, ովքեր բուժման նպատակով գտնվում են հիվանդանոցներում (եթե նրանց այնտեղ գտնվելը չի գերազանցել մեկ տարուց) և առողջարաններում, հանգստյան տներում (բացի մեկ-երկու օրյա) հանգստացողները, ծննդատներում գտնվողները, գիշերօթիկ դպրոցների սովորողները (բացի դրանցում մշտապես բնակվողներից) այնտեղ հաշվեգրվում են որպես ժամանակավոր ներկաներ

(իսկ իրենց մշտական բնակավայրում՝ որպես բացակայողներ), եթե նրանց մշտական բնակավայրը չի գտնվում այդ նույն համայնքի (քաղաքային, գյուղական) սահմաններում, որտեղ հիվանդանոցն է, առողջարանը, հանգստյան տունը, ծննդատունը, նշված դպրոցը կամ դպրոցին կից գիշերօթիկը:

5. Մարդահամարի հարցաթերթում գրառումները կատարվում են անկախ գրանցման (հաշվառման) առկայությունից ու բնույթից (մշտական կամ ժամանակավոր): *Օրինակ՝ եթե տվյալ անձը գրանցված է մի հասցեում, բայց փաստորեն բնակվում է մեկ այլ տեղում, ապա նրան պետք է հաշվեգրել ըստ փաստացի բնակության վայրի:*

6. *Ուսման վայրում բնակվող ԲՈՒՀ-երի ուսանողները,* միջին և նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների, մեկ տարի և ավելի տևողությամբ դասընթացներում սովորողները, անկախ նախկին մշտական բնակավայրից մեկնելու ժամկետից հաշվեգրվում են ըստ ուսման վայրի, իսկ իրենց նախկին մշտական բնակավայրում՝ մարդահամարի հարցաթերթի մեջ չեն մտցվում:

7. *Ժամկետային զինվորական ծառայության մեջ* գտնվող անձինք հաշվեգրվում են ոչ թե զորամասերում, այլ տանը՝ իրենց տնային տնտեսության կազմում:

8. *Զինծառայողները,* ովքեր ծառայությունն անցնում են պայմանագրային կարգով և *բնակվում են բաց տարածքներում՝* հաշվեգրվում են իրենց տնային տնտեսությունների կազմում՝ ընդհանուր կարգով:

9. *Օտարերկրյա պետություններում՝* ՀՀ դիվանագիտական, առևտրական և այլ ներկայացուցչություններում աշխատող *ՀՀ քաղաքացիներն* ու նրանց հետ ապրող իրենց ընտանիքի անդամները հաշվեգրվում են արտասահմանում՝ ՀՀ ներկայացուցչությունների և հյուպատոսությունների կողմից, իսկ Հայաստանում՝ իրենց մշտական բնակության վայրում այդ կարգի անձանց համար մարդահամարի հարցաթերթ չի լրացվում:

10. *Կալանավայրերում, ազատազրկման վայրերում և նմանատիպ այլ հաստատություններում գտնվող* բնակչության առանձին խմբերի հաշվեգրումը մարդահամարի ժամանակ անցկացվում է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան նախարարությունների կողմից համատեղ սահմանված կարգով և ժամկետներին: Իրենց նախկին բնակավայրում այդ անձինք մարդահամարի հարցաթերթում չեն հաշվեգրվում:

11. Տվյալ տանը (շինությունում) մշտապես բնակվող, սակայն մարդահամարի հաշվառման պահի դրությամբ, *մեկ ամսից ավել ժամկետով,* պայմանագրային աշխատանքի, ծառայողական գործուղման,

ուսման, հանգստի, ազգականների, ծանոթների մոտ հյուր՝ *արտասահման մեկնած ՀՀ քաղաքացիները* հաշվեգրվում են իրենց մշտական բնակավայրում՝ որպես բացակայողներ:

12. Հայաստանում *մշտապես* (1 տարի և ավելի ժամկետով) բնակվող *օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք* հաշվեգրվում են Հայաստանում՝ ըստ իրենց բնակության վայրի, ընդհանուր կարգով:

13. *1 տարի և ավելի ժամկետով* Հայաստան՝ տեղական և օտարերկրյա կազմակերպություններում (բացի օտար երկրների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում աշխատող օտարերկրյա քաղաքացիների) պայմանագրային աշխատանքի կամ ուսանելու *եկած անձինք (անկախ քաղաքացիությունից)* հաշվեգրվում են Հայաստանում՝ ըստ իրենց բնակության վայրի, ընդհանուր կարգով:

14. Արտասահմանից, ներառյալ ԱՊՀ երկրներից Հայաստան *մշտական բնակության եկած անձինք,* ովքեր դեռևս բնակության թույլտվություն չեն ստացել, հաշվեգրվում են ընդհանուր կարգով՝ այնտեղ (ըստ բնակության վայրի), որտեղ հաշվարարը կհանդիպի նրանց:

15. ՀՀ 2001թ. մարդահամարի ժամանակ հաշվեգրման ենթակա են նաև մարդահամարի հաշվառման պահին Հայաստանում ժամանակավորապես ներկա գտնվող անձինք, ովքեր մշտապես բնակվում են արտասահմանում՝

- Հայաստանում օտարերկրյա պետությունների դիվանագիտական, առևտրական ներկայացուցչությունների աշխատակիցները և նրանց հետ ապրող ընտանիքի անդամները, եթե նրանք բնակվում են դեսպանատանը պատկանող տարածքից դուրս՝ բնակելի շենքում կամ առանձնատանը:
- 1 տարուց պակաս ժամկետով ուսանելու կամ աշխատելու եկած անձինք (անկախ քաղաքացիությունից),
- 1 տարուց պակաս ժամկետով հանգստի, բուժման, ազգականների և ծանոթների մոտ հյուր, որպես զբոսաշրջիկներ, ուխտագնացներ Հայաստան եկած անձինք (անկախ քաղաքացիությունից),
- տարանցիկ (տրանզիտ) միգրանտները:

16. *Մշտական բնակատեղ չունեցող անձինք* (օրինակ՝ անօթևաններ) հաշվեգրվում են իրենց գիշերելու վայրերում՝ հավաքատեղերում, մեկ գիշերվա ընթացքում, հատուկ առանձնացված հաշվարարների կողմից:

17. Տնային տնտեսության անդամների հարցման ժամանակ հաշվարարը պարտավոր է պարզել, թե տվյալ տնային տնտեսության անդամներից որևէ մեկը չունի արդյո՞ք այլ բնակատեղ (բացառությամբ վերը՝ 6,7,9,10 կետերում թվարկված դեպքերից): Եթե ունի, ապա պետք է որոշել, թե մարդահամարի ժամանակ դրանցից որում պետք է հաշվեգրել տվյալ անձին: Նախապատվությունը տրվում է այն բնակատեղին, որտեղ բնակվում է հարցվողի տնային տնտեսությունը:

Օրինակ 1՝ եթե հարցվողն ունի բնակարան կամ տուն, որտեղ նա գրանցված է, բայց ընտանիքի հետ ապրում է մեկ այլ տեղ (ասենք, կնոջը պատկանող բնակարանում), ապա տվյալ անձը պետք է հաշվեգրվի այնտեղ, որտեղ բնակվում է իր ընտանիքը, կամ

Օրինակ 2՝ եթե հարցվողն ապրում է իր աշխատատեղի հանրակացարանում, իսկ հանգստյան և աշխատանքից ազատ օրերին մեկնում է այլ բնակավայրում բնակվող իր տնային տնտեսության մոտ, ապա տվյալ անձը պետք է հաշվեգրվի այնտեղ, որտեղ բնակվում է իր տնային տնտեսությունը:

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

18. Որևէ տանը (շինությունում) որպես ժամանակավոր ներկա հաշվեգրված անձանց (բացի օտարերկրացիներից)՝ հաշվարարը տալիս է տեղեկանք մարդահամարն անցնելու մասին (Ձև 5, Տես՝ հավելված 4):

Բացի այդ, տեղեկանք տրվում է նաև այն անձանց՝

- ում համար կազմվել է հսկիչ թերթ (տես՝ 20-րդ կետ)
- ում համար կազմվել է վերահսկիչ փաստաթուղթ (տես՝ 21-րդ - կետ)
- ով մտադիր է մարդահամարի անցկացման կամ վերահսկիչ շրջագայության ընթացքում՝ հոկտեմբերի 10-ից մինչև 25-ը ներառյալ, մեկնել այլ բնակավայր, թեկուզ մեկ օրով:

Հաշվարարն իր տեղամասում տրվող տեղեկանքները հաջորդաբար համարակալում է իր հաշվային տեղամասի սահմաններում և բնակչությանը խնդրում է տեղեկանքը պահել մինչև հոկտեմբերի 25-ը:

19. Մարդահամարի հաշվառումն անցնելու մասին տեղեկանք ունեցող անձանց իրենց մշտական բնակավայրից դուրս (այլ քաղաքային կամ գյուղական համայնքներում՝ հաշվարարի հանդիպելու դեպքում), չպետք է երկրորդ անգամ հաշվեգրել (գրանցել մարդահա-

մարի հարցաթերթում): Սակայն մշտական բնակավայրում կազմվող մարդահամարի հարցաթերթում այդպիսի անձանց հաշվեգրումը կատարվում է նաև տեղեկանքի առկայության դեպքում՝ որպես բացակայող:

Օրինակ 1. Կ.Ամիրյանը, մշտապես բնակվում է Երևան քաղաքում, բայց հոկտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը (մարդահամարի հաշվառման պահին) գտնվել է Սյունիքի մարզի Կապան քաղաքում: Կապան քաղաքի հյուրանոցում հոկտեմբերի 10-ին հաշվեգրվել է որպես ժամանակավոր ներկա և հաշվարարից ստացել է տեղեկանք: Հոկտեմբերի 12-ին վերադարձել է Երևան և իր բնակարանում հանդիպել է Երևան քաղաքի հաշվարարին: Կ.Ամիրյանը հաշվարարին ներկայացրել է ք.Կապանում մարդահամարն անցնելու մասին տեղեկանքը: Անկախ դրանից, Կ.Ամիրյանը Երևանում իր տնային տնտեսություն այցելած հաշվարարի կողմից պետք է հաշվեգրվի իր տնային տնտեսության կազմում՝ որպես բացակայող, լրացնելով բացակայության վերաբերյալ համապատասխան հարցերը:

20. Եթե հաշվարարը տվյալ տանը (շինությունում) կհանդիպի մշտապես կամ ժամանակավորապես ներկա գտնվող անձի, ով հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերին՝ 00 ժամին գտնվել է այդ քաղաքի կամ գյուղական համայնքի սահմաններից դուրս մեկ այլ բնակավայրում, որտեղ պետք է հաշվեգրվի որպես ժամանակավոր ներկա կամ մշտապես ներկա, ապա նա պարտավոր է պարզել, թե այդ անձն ունի արդյոք տեղեկանք մարդահամարն այդ բնակավայրում անցնելու մասին: Այսպիսի տեղեկանք չունեցողների համար հաշվարարը պետք է կազմի հսկիչ թերթ (ՁԼ 4, Տես՝ հավելված 3):

Հսկիչ թերթը կազմելիս լրացվում են երեք հասցեներ՝

1) երեսի կողմի հասցեամասում գրվում է այն հասցեն (մարզ, տարածք, համայնք, բնակավայր, փողոց և այլն) որտեղ կազմվում է տվյալ հսկիչ թերթը, այնուհետև լրացման ☑ նիշ է դրվում՝

ա) կետով *«2001թ. հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերին գտնվել է տվյալ հասցեում»* հարցի «այո» կամ «ոչ» պատասխանի վանդակում,

բ) կետով՝ *«հսկիչ թերթի կազմման հետ մեկտեղ մտցված է մարդահամարի հարցաթերթում՝ բացակայության մասին նշումով»* հարցի «այո» կամ «ոչ» պատասխանի վանդակում:

2) հսկիչ թերթի 2-րդ հարցում պահանջվում է գրել հարցվողի մշտական բնակավայրի հասցեն,

3) հսկիչ թերթի հակառակ երեսին՝ առանձնացված վանդակում պահանջվում է գրել այն բնակավայրի հասցեն, որտեղ տվյալ անձը պետք է հաշվեգրվի որպես մշտապես ներկա կամ որպես

ժամանակավոր ներկա, այսինքն որտեղ գտնվել է մարդահամարի հաշվառման պահին: Հետագայում, ըստ վերջին հասցեի ստուգվում է, թե տվյալ անձը մարդահամարն անցնելու նշված վայրում մտցվել է արդյո՞ք համապատասխան մարդահամարի հարցաթերթում, թե ոչ: Այդ պատճառով շատ կարևոր է, որպեսզի այն լրացված լինի պահանջվող ամբողջականությամբ և ճշգրտությամբ:

Հսկիչ թերթը ներառնում է 13 անհատական հարց, որոնք բացառությամբ 2-րդ հարցի (մշտական բնակության վայրը(հասցեն)), համապատասխանում են մարդահամարի հարցաթերթի 1, 8, 9, 10, 11, 12, 13, 18, 19, 20, 21, 24-րդ հարցերին:

- Եթե որևէ անձի համար հսկիչ թերթ է կազմվում իր մշտական բնակավայրում, ապա հսկիչ թերթը կազմելու հետ մեկտեղ հաշվարարը նրան հաշվեգրում է նաև իր տնային տնտեսության մարդահամարի հարցաթերթում՝ որպես բացակա:

Օրինակ 2. Լ.Ավագյանը մշտապես բնակվում է Վանաձոր քաղաքում, բայց հոկտեմբերի 9-ին մեկնել է քաղաք Գյումրի՝ ազգականներին այցելության, որտեղ մնացել է մինչև հոկտեմբերի 13-ը: Հոկտեմբերի 13-ին վերադարձել է Վանաձոր և իր բնակարանում հանդիպել հաշվարարին:

Եթե Լ.Ավագյանը չունի տեղեկանք մարդահամարն անցնելու մասին, ապա Վանաձոր քաղաքի հաշվարարը նրա համար պետք է կազմի հսկիչ թերթ և տա տեղեկանք: Հսկիչ թերթում առաջին հասցեն լրացնելուց հետո հաշվարարը՝

ա) «2001թ. հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերին գտնվել է տվյալ հասցեում» հարցում պետք է նշի «ոչ», իսկ բ) «հսկիչ թերթի կազմման հետ մեկտեղ մտցված է մարդահամարի հարցաթերթում՝ բացակայության մասին նշումով»՝ «այո» պատասխանի վանդակները:

Այս օրինակում հսկիչ թերթի հասցեամասում և 2-րդ հարցում լրացվում է Վանաձոր քաղաքի հասցեն, իսկ հսկիչ թերթի հակառակ երեսին՝ հասցեի համար առանձնացված մասում, Գյումրի քաղաքի հասցեն: Լ.Ավագյանը Գյումրիում պետք է հաշվեգրվի որպես ժամանակավոր ներկա, իսկ Վանաձորում որպես բացակա:

- Եթե որևէ անձի համար հսկիչ թերթը կազմվում է իր մշտական բնակավայրից դուրս, ապա հսկիչ թերթը կազմելու վայրում նրա համար մարդահամարի հարցաթերթ չի լրացվում :

Օրինակ 3. Դ.Պողոսյանը մշտապես բնակվում է Աբովյան քաղաքում, հոկտեմբերի 11-ին մեկնել է գործուղման քաղաք Վանաձոր (մարդահամարի կրիտիկական պահից հետո) և հոկտեմբերի 15-ին այնտեղ հանդիպել է հաշվարարին: Դ.Պողոսյանը Աբովյան քաղաքում պետք է հաշվեգրվի որպես մշտապես ներկա (մարդահամարի կրիտիկական պահին եղել է իր տանը): Բայց քանի որ նա տեղեկանք չունի մարդահամարն անցնելու մասին, ապա Վանաձոր քաղաքի հաշվարարը պարտավոր է Դ.Պողոսյանի համար կազմել հսկիչ թերթ և տալ տեղեկանք: Վանաձոր քաղաքում Դ.Պողոսյանի համար հաշվարարը մարդահամարի հարցաթերթ չի կազմում, իսկ հսկիչ թերթում առաջին հասցեից հետո ա) «2001թ. հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերին գտնվել է տվյալ հասցեում» և բ) «հսկիչ թերթի կազմման հետ մեկտեղ մտցված է մարդահամարի հարցաթերթում՝ բացակայության մասին նշումով» հարցերում նշվում է «ոչ» պատասխանի վանդակները:

Այս օրինակում հսկիչ թերթի հասցեամասում գրվում է Վանաձոր քաղաքի հասցեն, իսկ 2-րդ հարցում և հսկիչ թերթի հակառակ կողմում հասցեի համար առանձնացված մասում, Աբովյան քաղաքի հասցեն:

Օրինակ 4. Գ.Մաթևոսյանը, որը մշտապես բնակվում է Սպիտակ քաղաքում, հոկտեմբերի 9-ի առավոտյան անձնական գործով մեկնել է ք.Գավառ, որտեղ մնացել է մինչև հոկտեմբերի 12-ը, իսկ հոկտեմբերի 12-ին մեկնել է գյուղ Նյուվադի (Սյունիքի մարզ, Մեղրու տարածք) և այնտեղ հանդիպել հաշվարարին:

Գ.Մաթևոսյանը գյուղ Նյուվադի է եկել մարդահամարի կրիտիկական պահից հետո և չունի մարդահամարն անցնելու մասին տեղեկանք և Նյուվադի գյուղի հաշվարարը պետք է նրա համար կազմի հսկիչ թերթ և տա տեղեկանք: Գյուղ Նյուվադիում Գ.Մաթևոսյանի համար մարդահամարի հարցաթերթ չի կազմվում, իսկ հսկիչ թերթի ա) «2001թ. հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերին գտնվել է տվյալ հասցեում» և «բ) հսկիչ թերթի կազմման հետ մեկտեղ մտցված է մարդահամարի հարցաթերթում՝ բացակայության մասին նշումով» հարցերում նշվում է «ոչ» հուշման վանդակները:

Քանի որ Գ.Մաթևոսյանը մարդահամարի հաշվառման պահին եղել է Գավառում, ապա նա Գավառ քաղաքում պետք է հաշվեգրվի որպես ժամանակավոր ներկա, իսկ Սպիտակ քաղաքում, որն իր մշտական բնակավայրն է՝ որպես բացակա:

Հսկիչ թերթի առաջին հասցեամասում հաշվարարը գրում է Նյուվադի գյուղի (որտեղ լրացվել է հսկիչ թերթը) հասցեն, 2-րդ հարցում՝ Սպիտակ քաղաքի մշտական բնակության վայրը (հասցեն), իսկ հակառակ կողմում՝ առանձնացված գոտում՝ Գավառ քաղաքի (որտեղ պետք է հաշվեգրվի որպես ժամանակավոր ներկա) հասցեն:

Յուրաքանչյուր հաշվարար իր լրացրած հսկիչ թերթերը համարակալում է իր հաշվային տեղամասի սահմաններում՝

հերթական համարակալմամբ և հաշվարարի հուշատետրում նշումներ է կատարում այն տան(շինության) տողում, որոնցում կազմվել են հսկիչ թերթեր:

21. Եթե հաշվարարը հանդիպում է որևէ անձի, որն ունի մեկից ավելի բնակարան, տուն, առանձնատուն և այլն (բացառությամբ ընդհանուր դրույթների 6-10-րդ կետերում թվարկված դեպքերից), ապա նա պետք է պարզի, թե որտեղ է հաշվեգրվելու տվյալ անձը: Հաշվեգրման վայրը պարզելուց հետո՝

- եթե ընտրվում է տվյալ տունը (շինությունը), ապա տվյալ անձի վերաբերյալ տեղեկությունները մարդահամարի հարցաթերթում լրացնելու հետ մեկտեղ հաշվարարը կազմում է *վերահսկիչ փաստաթուղթ* (ձև 6, Տես՝ հավելված 5) և տալիս է տեղեկանք մարդահամարն անցնելու մասին *(օրինակ 5):*
- եթե հարցվողի հաշվեգրման վայրը չի համընկնում տվյալ հասցեի հետ, որտեղ նրան հանդիպել է հաշվարարը և նա չունի «Տեղեկանք» մարդահամարն անցնելու մասին, ապա այդ անձի համար հաշվարարը կազմում է «Հսկիչ թերթ» և տալիս է «Տեղեկանք» մարդահամարն անցնելու մասին:

Օրինակ 5. Ս.Սահակյանը գրանցված է Երևան քաղաքի, Շինարարների, 14, բն. 9 հասցեում, սակայն փաստացի իր տնային տնտեսության (կնոջ, տղայի, զոքանչի) հետ բնակվում է Երևանի Արաբկիր 28-րդ փ., 19 տուն հասցեում՝ զոքանչի բնակարանում: Այստեղ այցելած հաշվարարը, պարզելով, որ Ս.Սահակյանն ունի ևս մեկ բնակարան, որտեղ գրանցված է, սակայն սովորաբար բնակվում է այս հասցեում՝ իր տնային տնտեսության հետ, Ս.Սահակյանին հաշվեգրում է մարդահամարի հարցաթերթում և նրա համար կազմում է վերահսկիչ փաստաթուղթ, որում լրացնում է այն հասցեն, որտեղ կազմվել է փաստաթուղթը (Արաբկիր 28-րդ փ., 19 տուն), իսկ հակառակ կողմում՝ Ս.Սահակյանի երկրորդ բնակարանի հասցեն (Շինարարների14 բն. 9), որտեղ նա գրանցված է, բայց չի հաշվեգրվելու: Բացի այդ հաշվարարը պետք է Ս.Սահակյանին տա տեղեկանք մարդահամարն անցնելու մասին:

Վերահսկիչ փաստաթղթերը համարակալվում են հաշվային տեղամասի սահմաններում՝ միասնական հերթական համարներով և լրացմանը զուգընթաց հանձնվում հրահանգիչ-հսկիչին: Իր հուշատետրում հաշվարարը նշում է, թե յուրաքանչյուր տանը (շինությունում) քանի վերահսկիչ փաստաթուղթ է լրացրել: Հետագայում վերահսկիչ փաստաթղթերի միջոցով պետք է իրականացվի մարդահա-

մարի ժամանակ այդ կարգի անձանց հաշվառման ճշգրտությունը (կրկնակի հաշվառումից կամ բացթողումից խուսափելու համար):

23. Մարդահամարի ավարտից հետո անց է կացվում ընտրանքային *վերահսկիչ շրջագայություն (շրջայց):* Քաղաքներում և գյուղական վայրերում վերահսկիչ շրջագայությունն անցկացվում է բոլոր հաշվային տեղամասերում, դրանցից յուրաքանչյուրում ընդգրկելով նախապես ընտրված տների, բնակարանների 10%-ը: Վերահսկիչ շրջագայության նպատակն է՝

- պարզել բացթողումներն ու կրկնակի հաշվառումները,
- ճշգրտել բացակայության մասին գրառումները:

Վերահսկիչ շրջագայությունն անցկացվում է (հոկտեմբերի 20-ից 25-ը) հրահանգիչ-հսկիչի և հաշվարարի՝ տնային տնտեսություններ համատեղ այցելությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր հաշվարարի վերահսկիչ շրջագայության հաշվային տեղամասը որոշում է հրահանգիչ- հսկիչը:

Վերահսկիչ շրջագայության ժամանակ հրահանգիչ-հսկիչը (կամ հաշվարարը) ստուգում է, թե տվյալ տանը (շինությունում) բնակվող տնային տնտեսության բոլոր անդամներն են անցել արդյո՞ք մարդահամար, ներառյալ հոկտեմբերի 10-ից հետո եկածները:

Տվյալ տանը (շինությունում), ինչպես մշտապես, այնպես էլ ժամանակավոր բնակվող բոլոր անձանց համար անհրաժեշտ է պարզել, թե նրանք որտեղ են գտնվել մարդահամարի հաշվառման պահին՝ 2001 թ. հոկտեմբերի 9-ի լույս 10-ի 00 ժամին:

Տվյալ տնային տնտեսությունում մարդահամարի ժամանակ հաշվառման ենթակա, բայց հաշվարարի կողմից բաց թողնված բոլոր անձանց հաշվարարը (հրահանգիչ-հսկիչը) գրում է տվյալ տնային տնտեսության համար նախատեսված մարդահամարի հարցաթերթում՝ լրացնելով անձի վերաբերյալ բոլոր հարցերի պատասխանները: Վերահսկիչ շրջագայության ժամանակ հաշվառման ենթակա, սակայն մարդահամարն անցնելու վերաբերյալ տեղեկանք չունեցող անձանց համար՝ ըստ անհրաժեշտության, կազմվում են հսկիչ թերթ և վերահսկիչ փաստաթուղթ:

Ընդհանուր տեղեկություններ մարդահամարի հարցաթերթի լրացման մասին

Մարդահամարի հարցաթերթը կազմվում է տնային տնտեսությունների համար: Յուրաքանչյուր տնային տնտեսության համար լրաց-

վում է առանձին հարցաթերթ: Ընդ որում տնային տնտեսությունները լինում են անհատական և խմբային (ինստիտուցիոնալ):

Անհատական տնային տնտեսություն կարող է լինել կամ.

ա) առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում բնակվող մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունը, երբ անձն ինքնուրույն ապահովում է իրեն կենսականորեն անհրաժեշտ ամեն ինչով և ընդհանուր տնտեսություն վարելու համար տվյալ բնակելի միավորում բնակվող այլ անձանց հետ չի միավորում իր միջոցները, *կամ*

բ) առանձին բնակելի միավորում, կամ դրա մի մասում, կամ մի քանի շինություններում համատեղ բնակվող 2 և ավելի անձանցից բաղկացած տնային տնտեսությունը, որի անդամները իրենց կենսապահովումն իրականացնում են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները: Այդ անձինք կարող են կապված լինել ազգակցական կամ ամուսնական կապով, կամ չլինել ազգական, կամ և՛ մեկը, և՛ մյուսը:

Հաշվեգրման ընթացքում պետք է նկատի ունենալ, որ.

- առանձին անձանց մոտ բնակտարածություն վարձակալած անձինք, բնակելի միավորի սեփականատիրոջ տնային տնտեսության կազմի մեջ չեն մտցվում, այլ հաշվեգրվում են որպես առանձին տնային տնտեսություններ,
- հանրակացարաններում, հյուրանոցներում, առողջարաններում և հանգստյան տներում մշտապես բնակվող անձինք հաշվեգրվում են որպես ինքնուրույն տնային տնտեսություններ,
- սպասարկող անձնակազմ հանդիսացող անձինք, ովքեր բնակվում են այն նույն հիմնարկներում, որտեղ աշխատում են (օրինակ, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում և այլն), հաշվեգրվում են որպես առանձին տնային տնտեսություններ, բացառությամբ սույն հրահանգի ընդհանուր դրույթների 17-րդ կետում նշված 2-րդ օրինակի:
- մշտական բնակատեղ չունեցող անձինք (անօթևաններ, թափառաշրջիկներ) նույնպես հաշվեգրվում են որպես տնային տնտեսություններ:

Խմբային (ինստիտուցիոնալ) տնային տնտեսություն են կազմում այն անձինք, ովքեր մշտապես բնակվում են մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, հատուկ նշանակության դպրոցներում (օրինակ երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկ երեխաների գիշերօթիկներում), ծերերի և հաշմանդամների տներում, կրոնական հիմնարկներում (օրինակ մենաստաններում), բանտերում, ուղղիչ աշխատանքային գաղութներում և նման այլ հիմնարկներում, այսինքն՝ կազմում են

համատեղ բնակվող բնակչության խմբեր և սովորաբար ենթարկվում են ընդհանուր կանոնների և սնվում են համատեղ:

Խմբային (ինստիտուցիոնալ) տնտեսություններով բնակվող բնակչության կազմի մեջ չեն մտցվում սպասարկող անձնակազմի տնային տնտեսությունները:

Բնակելի միավոր է հանդարվում մեկ տնային տնտեսության* անդամների բնակության համար նախատեսված՝ կառուցվածքային առումով առանձին և անկախ բնակատեղը, կամ ապրելու համար չնախատեսված, բայց մարդահամարի ժամանակ որպես այդպիսին օգտագործվող կացարանը: Բնակելի միավորը կարող է լինել զբաղեցված կամ չզբաղեցված (դատարկ), շարժական կամ հանպատրաստից ստեղծված, ինչպես նաև մարդահամարի պահին տնային տնտեսության անդամների կողմից օգտագործվող ցանկացած տարածք, անկախ օգտագործման ժամկետից և հնարավորություններից:

Հետևաբար, բնակելի միավորը կարող է իրենից ներկայացնել.

- զբաղեցված կամ չզբաղեցված տուն, բնակարան, առանձին սենյակ կամ սենյակների խումբ,
- խրճիթ, ավտոմեքենայի բնակեցված կցորդ, կամ մեկ այլ ծածկ, որը մարդահամարի հաշվառման պահին կարող է որպես բնակելի միավոր զբաղեցված լինել,
- հյուրանոցում, հանրակացարանում, ճամբարում և այլն՝ առանձին հարմարեցված բնակարան, սենյակ կամ մի քանի սենյակներ:

Հաշվարարը պարտավոր է մարդահամարի հարցաթերթի հարցերն ուղղել հարցվողին ճիշտ այնպես, ինչպես դրանք գրված են հարցաթերթում: Մարդահամարի հարցաթերթում բոլոր գրառումները պետք է կատարվեն գնդիկավոր գրիչով: Այն հարցերը, որոնք ունեն հնարավոր մի քանի պատասխաններ, բերված են *տվյալ հարցի համար նախատեսված սյունակից ելնող սլաքի ուղղությամբ տեղադրված վանդակում:* Հարցերի պատասխանները լրացվում են՝ բառեր կամ թվեր (համապատասխան հուշման կոդերը) գրելով:

Հարցաթերթի բոլոր հարցերի պատասխանները հաշվարարը պետք է լրացնի միայն տվյալ հարցի համար նախատեսված սյունակի սպիտակ հատվածում:

---

*)*Բնակելի միավորը նախատեսված է մեկ տնային տնտեսության բնակության համար, սակայն լինում են դեպքեր, երբ այն զբաղեցնում են երկու և ավելի տնային տնտեսություններ: Այդպիսի տնային տնտեսությունների համար բնակելի միավորի հերթական համարը չի փոխվում (այսինքն գրվում է նույն համարը):*

Չի թույլատրվում գրառումներ կատարել մուգ գույնով առանձնացված գոտիներում: Դրանք նախատեսված են հարցաթերթի հետագա մշակման (կոդավորման) համար:

Մարդահամարի հարցաթերթի ոչ ճիշտ լրացված գրառման վրա պետք է խնամքով մեկ գիծ քաշել և գրել ճիշտը:

Մարդահամարի հարցաթերթը բաղկացած է երեք բաժիններից.

I. Հասցեամասից
II. Անհատական հարցերից
III. Տնային տնտեսության բնակության պայմանները բնութագրող հարցերից

I ԲԱԺԻՆ՝ Հասցեամասի լրացման կարգը

Հաշվարարը մարդահամարի հարցաթերթի լրացումը սկսում է հասցեամասի լրացումից: Առաջին հերթին նա համարակալում է մարդահամարի հարցաթերթերը միասնական հերթական համարներով՝ իր հաշվային տեղամասի սահմաններում: Եթե առանձին տնային տնտեսություններում բնակվողների թիվը գերազանցում է 10 մարդուց, ապա հարցաթերթի նույն համարով կազմվում են երկու և ավելի հարցաթերթեր: Այդ դեպքում առաջին հարցաթերթի վրա համարից հետո գրվում է «ա» տառը, երկրորդի վրա՝ «բ» տառը (*օրինակ՝ Հարցաթերթ N* 1 3 ա, *Հարցաթերթ N* 1 3 բ) և այդպես շարունակ: Հարցաթերթի հասցեամասը բնութագրող բոլոր տեղեկությունները լրացվում են ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ կազմված հարցաթերթերի վրա:

Այնուհետև, հասցեամասում հաշվարարը լրացնում է համապատասխան մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի համարները, որոնք իրեն նախապես հայտնում է հրահանգիչ-հսկիչը, ինչպես նաև հաշվային տեղամասի սահմանում համարակալում է ընակելի միավորները: Որից հետո լրացնում է մարզի, տարածքի, համայնքի, բնակավայրի անվանումները, որտեղ կազմվել է հարցաթերթը, ինչպես նաև տվյալ տնային տնտեսության հասցեն և հեռախոսի համարը:

Եթե մարդահամարի հարցաթերթը լրացվել է կազմակերպությունում, ապա հասցեամասում՝ «կազմակերպության անվանումը» տո-

ղում պետք է գրել դրա անվանումը, օրինակ՝ «Արզնի» առողջարան, «Էրեբունի» հյուրանոց և այլն:

II ԲԱԺԻՆ՝ Ցուցումներ մարդահամարի հարցաթերթի անհատական հարցերի պատասխանները լրացնելու կարգի մասին

Մեկ մարդահամարի հարցաթերթը նախատեսված է 10 անձի համար: Եթե տնային տնտեսությունը բաղկացած է 10-ից ավելի անձանցից, ապա հարցաթերթը լրացնելիս հաջորդ հարցաթերթի վրա՝ «Ա» սյունակում ճշգրտվում է հերթական համարակալումը:

ՀԱՐՑ 1
ԹՎԱՐԿԵՔ ԽՆԴՐԵՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԻՆ ՁԵՐ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ (ՆԵՐԿԱ ԵՎ ԲԱՑԱԿԱ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐԿԱ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ***ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ***

Հաշվարարը անվանական գրանցում է տվյալ տնային տնտեսությունում բնակվող՝ հաշվեգրման ենթակա բոլոր անձանց (ներառյալ բացակայողներին), ինչպես նաև հաշվառման պահի դրությամբ՝ տվյալ տնային տնտեսությունում չբնակվող, սակայն ժամանակավոր ներկա գտնվող անձանց:

Յուրաքանչյուր տնային տնտեսությունում առաջինը գրվում է տնային տնտեսության մեծահասակ անդամներից մեկը, այնուհետև մնացած անդամները: Ընդ որում պետք է պահպանել տնային տնտեսության անդամների գրառման հետևյալ հերթականությունը.

- ամուսինը և կինը գրվում են իրարից հետո,
- զավակները (չամուսնացած) գրվում են իրենց ծնողներից հետո,
- եթե տնային տնտեսությունում կան մի քանի ամուսնական զույգեր, ապա սկզբում գրվում է մեկ ամուսնական զույգը և նրա երեխաները, իսկ հետո՝ երկրորդ զույգն ու նրա երեխաները և այդպես շարունակ,
- տնային տնտեսության այն անդամները, ովքեր ազգակցական կապի մեջ չեն տնային տնտեսության մյուս անդամների հետ, գրվում են վերջում:

Օրինակ, ինչպես Աղաքացի Ա.Մ. Ամիրյանը տեղեկացրել է հաշվարարին, իր բնակարանում բնակվում է մեկ տնային տնտեսություն հետևյալ

կազմով՝ ինքը Ամիրյանը, իր մայրը, կինը, ամուսնացած տղան, չամուսնացած աղջիկը, հարսը, թոռը, ամուսնալուծված քույրը: Հոկտեմբերի 3-ից Սյունիքի մարզից իրենց տեսակցելու է եկել կնոջ մորաքույրը: Ցուցակում առաջինը գրանցվելու ցանկություն է հայտնել ինքը՝ Ա.Մ. Ամիրյանը: Այդ դեպքում տնային տնտեսության անդամների գրառման հաջորդականությունը պետք է լինի այսպես.

առաջինը գրվում է Ամիրյանը, այնուհետև նրա՝ կինը	*առաջին ամուսնական զույգը և նրա չամուսնացած երեխան*
աղջիկը	
տղան	
տղայի կինը (Ամիրյանի հարսը)	*երկրորդ ամուսնական զույգը և նրա երեխան*
տղայի աղջիկը (Ամիրյանի թոռնուհին)	
Ամիրյանի մայրը	*ծնողներից մեկը, իր չամուսնացած երեխայի հետ*
Ամիրյանի քույրը	
կնոջ մորաքույրը	*այլ ազգական*

Տնային տնտեսության անդամներին անվանական գրանցելուց հետո հաշվարարը Ա սյունակի ներքևում տեղադրված «ընդամենը» վանդակում լրացնում է տվյալ տնտեսությունում հաշվեգրվածների ընդհանուր թվաքանակը: Տվյալ դեպքում գրվում է «ընդամենը» [0|9]: Եթե տնային տնտեսության համար կազմվել են մեկից ավելի հարցաթերթեր, ապա հաշվեգրվածների ընդհանուր թվաքանակը լրացվում է միայն վերջին հարցաթերթի վրա:

ՀԱՐՑ 2
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԻՆ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԼՈՒՅՍ 10-Ի 00 ԺԱՄԻՆ, ԵՂԵԼ ԵՔ՝
ՄՇՏԱՊԵՍ ՆԵՐԿԱ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐԿԱ, ԲԱՑԱԿԱ

Այս հարցի պատասխանը լրացնելու համար հաշվարարը պարզում է.

ա) տվյալ տնային տնտեսության մշտապես բնակվողներից ո՞վ է հոկտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը ներկա եղել տանը (շինությունում) և ենթակա է հաշվեգրման՝ որպես «մշտապես ներկա»՝ գրելով դրան

համապատասխան նույնականացման*) կոդը: Մշտապես բնակվողներից ո՞վ հոկտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը տանը չի եղել և ենթակա է հաշվեգրման, որպես բացակա:

բ) Տվյալ տանը (շինությունում) սովորաբար չբնակվողներից ո՞վ է հոկտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը ներկա եղել այդտեղ և այդ պատճառով ենթակա է հաշվեգրման որպես ժամանակավոր ներկա:

Հարցման ժամանակ տնային տնտեսության անդամներից որևէ մեկի բացակայության դեպքում հաշվարարը մարդահամարի հարցաթերթում նրան վերաբերող անհատական հարցերի պատասխանները կարող է գրել տնային տնտեսության մյուս անդամների կողմից տրված տեղեկությունների հիման վրա, եթե նրանք կարող են սպառիչ պատասխաններ տալ մարդահամարի հարցաթերթի բոլոր հարցերի վերաբերյալ: Եթե տնային տնտեսության բացակայող անդամի մասին հնարավոր չէ լիարժեք տեղեկություններ ստանալ, ապա հաշվարարը մարդահամարի հարցաթերթում պետք է գրի բացակայողի ազգանունը, անունը, հայրանունը և նրան անձամբ հարցում կատարի կրկնակի այցելության ժամանակ:

Տվյալ շինությունում հաշվեգրման ենթակա, սակայն մարդահամարի հաշվառման ժամանակաընթացքում ամբողջ կազմով բացակայող տնային տնտեսությունների վերաբերյալ տեղեկությունները հաշվարարը պետք է ստանա հարևաններից, տնային կառավարչություններից, գյուղապետարանից, ՆԳՆ համապատասխան անձնագրային բաժիններից և հնարավոր այլ աղբյուրներից: Այդպիսի դեպքերի մասին հաշվարարը պարտավոր է տեղյակ պահել հրահանգիչ-հսկիչին և ստանալ նրա աջակցությունը:

3-րդ և 4-րդ հարցերը լրացվում են միայն բացակա կամ ժամանակավոր ներկա գտնվող անձանց համար՝ ում համար 2-րդ հարցում գրվել է նույնականացման 2 կամ 3 կոդը

ՀԱՐՑ 3

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ԱՄԻՍՆԵՐՈՎ)

Հաշվարարը պարզում է բացակայող կամ ժամանակավոր ներկա գտնվող անձի բացակայելու կամ ներկայության տևողությունն ամիսներով՝ հաշվառման պահի դրությամբ:

---

*) *Նույնականացման կոդն օգտագործվում է յուրաքանչյուր հարցի համար առաջարկված պատասխանների հետագա մշակման և ամփոփման համար*

Օրինակ՝ եթե հաշվեգրվածներից որևէ մեկի բացակայությունը 2 տարի է, ապա այդ անձի ազգանվան դիմաց 3-րդ սյունակում գրվում է [2|4], *կամ եթե անձի ժամանակավոր ներկայությունը հաշվառման պահի դրությամբ 2 ամիս է, ապա գրվում է* [0|2]:

Այն անձանց համար, որոնց բացակայությունը 99 ամսից (8 տարի 3 ամսից) ավելի է գրվում է՝ [9|9] :

ՀԱՐՑ 4
ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ՆՊԱՏԱԿԸ

Նշվում է 4-րդ սյունակից ելնող սլաքի ուղղությամբ տեղադրված վանդակում որպես պատասխան առաջարկված հուշումներից մեկին համապատասխանող նույնականացման կոդը՝ աշխատանք, ընտանեկան, ուսում, հյուր, գործուղում, զբոսաշրջիկ, այլ:

Միայն բացակայողի համար

ՀԱՐՑ 5
ՈՐՏԵ՞Ղ Է ԳՏՆՎԵԼ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԻՆ (ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԼՈՒՅՍ 10-Ի ԿԵՍԳԻՇԵՐԻՆ)

Եթե բացակայողը գտնվել է Հայաստանի տարածքում, ապա գրվում է այն մարզի[1]) անվանումը, որտեղ նա գտնվել է, իսկ եթե արտասահմանում՝ ապա երկրի անվանումը[2]):

Միայն ժամանակավոր ներկա գտնվողի համար

---

[1]) Տվյալների հետագա ամփոփումն իրականացվելու է «Վարչատարածքային բաժանման միավորների Հայաստանի դասակարգչի» կիրառմամբ, որն ընդունվել և գործողության մեջ է դրվել Հայպետստանդարտի կողմից՝ հրաման թիվ 57 առ 2000.12.23

[2]) Տվյալների հետագա ամփոփումն իրականացվելու է «Երկրների անունների Հայաստանի դասակարգչի» կիրառմամբ, որն ընդունվել և գործողության մեջ է դրվել Հայպետստանդարտի կողմից՝ որոշում թիվ 3 առ 02.03.1999

Վերոհիշյալ դասակարգիչներն օգտագործվում են ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից՝ կիրառման համար հավաքության արժանանալուց հետո:

ՀԱՐՑ 6
ՈՐՏԵ՞Ղ ԵՔ ՍՈՎՈՐԱԲԱՐ ԴՈՒՔ ԲՆԱԿՎՈՒՄ

Յուրաքանչյուր ժամանակավոր ներկա հաշվեգրված անձի համար գրվում է նրա մշտական բնակության վայրը: Եթե նա մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, ապա այս հարցի պատասխանի համար նախատեսված առաջին տողում գրվում է մարզի, իսկ երկրորդում՝ բնակավայրի անվանումը

Օրինակ՝ Արագածոտն
գ.Կարպի:

Եթե ժամանակավոր ներկա գտնվողի մշտական բնակավայրը Հայաստանի սահմաններից դուրս է, ապա առաջին տողում գրվում է երկիրը, որտեղ նա մշտապես բնակվում է, իսկ երկրորդ տողը չի լրացվում:

ՀԱՐՑ 7
ՁԵՐ ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԸ ԱՌԱՋԻՆԸ ԳՐՎԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Այս հարցի պատասխանը լրացնելու համար հաշվարարն օգտվում է 7ա սյունակին համապատասխանող վանդակում բերված հուշումներից:

Տնային տնտեսությունում առաջինը գրված անձի համար առաջին տողում գրվում է՝ [0][1]: Տնային տնտեսության մյուս անդամների համար գրվում է բերված հուշումներից մեկին համապատասխանող կոդը: Եթե հարցվողը հանդիսանում է տնային տնտեսությունում առաջինը գրված անձի տղան, ապա անհրաժեշտ է գրել *«աղջիկը, տղան»* հուշման կոդը՝ [0][3] և այլն, իսկ եթե հարցվողը ունի այլ ազգակցական կամ խնամիական կապ տնային տնտեսությունում առաջինը գրված անձի նկատմամբ, քան թվարկվածները (*օրինակ՝* եղբորորդի) ապա գրվում է *«այլ ազգական»* հուշման կոդը՝ [1][0]:

Ազգակցական կամ խնամիական կապը որոշելու առանձին դեպքեր		Այլ ազգակցական կամ խնամիական կապ	
Սկեսրայր	ամուսնու հայրը	Աներծագ	կնոջ եղբայրը
Սկեսուր	ամուսնու մայրը	Տեցր	ամուսնու եղբայրը
Զոքանչ	կնոջ մայրը	Տայ	ամուսնու քույրը
Աներ	կնոջ հայրը	Քենի	կնոջ քույրը
Փեսա	աղջկա կամ քրոջ ամուսինը	Քենակայ(բաջանաղ)	քենու ամուսին
Հարս	եղբոր կամ տղայի կինը		

Տվյալ տնային տնտեսության առաջինը գրված անձի հետ ազգակցական կամ խնամիական կապ չունեցող անձի համար հաշվարարը լրացնում է *«ոչ ազգական»* հուշման կոդը՝ [1][1]:

«Մենյակակից» հուշման կոդը՝[1][2], գրվում է այն անձանց համար, ովքեր մշտապես համատեղ բնակվում են՝ մասնակի կամ ամբողջությամբ պետության, հասարակական կամ կրոնական կազմակերպությունների ապահովության ներքո գտնվող (բացի առաջինը գրված անձ(անց)ից)՝ տուն-ինտերնատներում (ծերերի և հաշմանդամների), մանկատներում, խրոնիկ հիվանդների հիվանդանոցներում, մենաստաններում (ինստիտուցիոնալ բնակչություն): Բացառություն են կազմում այն անձինք, ովքեր ազգակցական կապ ունեն իրար հետ (օր., տուն-ինտերնատում՝ կարող են բնակվել ամուսիններ, կամ մանկատանը՝ քույր և եղբայր), որոնց համար հաշվարարն այս հարցը լրացնում է համաձայն ազգակցական կապի:

Եթե տնային տնտեսությունը բաղկացած է մեկ անձից, ապա լրացվում է միայն *«տնային տնտեսությունում առաջինը գրված անձ»* հուշմանը համապատասխանող 01 կոդը:

Մոր (հոր) հերթական համարը ցուցակում (սյունակ «7բ»)

Տնային տնտեսությունում ծնողների հետ բնակվող յուրաքանչյուր անձի համար (անկախ տարիքից, ինչպես նաև ամուսնական վիճակից) *առանց լրացուցիչ հարցման «7բ» սյունակում հաշվարարը* գրում է հարցաթերթի «Ա» սյունակում նրա մոր (հարազատ կամ խորթ) անվանը համապատասխանող հերթական համարը:

Այն դեպքում, երբ տնային տնտեսության կազմում տվյալ անձի մայրը չկա, սակայն կա հայրը՝ գրվում է հոր հերթական համարը, իսկ եթե տնային տնտեսության կազմում չկան ոչ մայրը, ոչ հայրը, ապա այս սյունակում ոչինչ չի գրվում:

ՀԱՐՑ 8
ՁԵՐ ՍԵՌԸ

Սովորաբար անձի սեռը որոշվում է դատելով նրա անունից: Առանձին դժվար դեպքերում, հավաստիանալու նպատակով՝ պետք է տրվի ճշտող հարց:

Արականի դեպքում գրվում է 1, իսկ իգականի դեպքում՝ 2 նույնականացման կոդերը:

ՀԱՐՑ 9
ՁԵՐ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ, ԱՄԻՍԸ, ՏԱՐԻՆ

Այս հարցի պատասխանը գրվում է թվերով՝ «9ա» սյունակում՝ ծննդյան օրը, «9բ»-ում՝ ամիսը, «9գ»-ում՝ տարին:

Օրինակ, եթե հարցվողը ծնվել է 1946թ. մայիսի 12-ին, ապա «9ա» սյունակում անհրաժեշտ է գրել [1][2], *«9բ» սյունակում* [0][5], *իսկ 9գ սյունակում՝* [1][9][4][6], *եթե 2001թ. հոկտեմբերի 8-ին, ապա համապատասխանաբար «9ա»-ում՝* [0][8], *«9բ»-ում՝* [1][0], *«9գ»-ում՝* [2][0][0][1]:

Տարիքը՝ լրացած տարիներով (սյունակ «9դ»)

Ծննդյան տարեթիվը գրելուց հետո, *առանց լրացուցիչ հարցման՝* օգտվելով «Ծննդյան հայտնի տարեթվով տարիքը՝ լրացած տարիներով որոշելու օժանդակ աղյուսակից, (*տես՝ հավելված 1*) հաշվարարը որոշում է անձի տարիքը՝ լրացած տարիներով և գրում «9դ» սյունակում: Ընդ որում, աղյուսակում պետք է ուշադրություն դարձնել, որ հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 9-ը ծնվածների տարիքը ըստ համապատասխան տարեթվի գրված է առաջին, իսկ հոկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ծնվածներինը՝ երկրորդ սյունակում: Մեկ տարեկանից փոքր երեխաների համար «9դ» սյունակում գրվում է՝ [ ][ ][0]:

ՀԱՐՑ 10
ՁԵՐ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

Եթե հարցվողը ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, ապա հարցի պատասխանի համար նախատեսված առաջին տողում գրվում է մարզի, իսկ երկրորդում՝ բնակավայրի անվանումները, որտեղ նա ծնվել է:

Օրինակ՝ Սյունիք կամ *Արարատ* կամ *Շիրակ* և այլն:

ք.*Գորիս* գ.*Փոքր Վեդի* ք.*Արթիկ*

Եթե հարցվողը ծնվել է արտասահմանում, ապա առաջին տողում գրվում է միայն երկրի անվանումը (*օրինակ՝ «Վրաստան», «Ռուսաստան», «Հունաստան», «ԱՄՆ»* և այլն), իսկ երկրորդ տողը չի լրացվում:

ՀԱՐՑ 11
ՁԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար գրվում է Հայաստան, իսկ այլ երկրների քաղաքացիների համար՝ այն պետության անվանումը, որի քաղաքացին նրանք հանդիսանում են, *օրինակ՝ «Գերմանիա» «Ռուսաստան», «Լիբանան»* և այլն: Քաղաքացիություն չունեցող անձանց համար, գրվում է «չունի»:

Երեխաների քաղաքացիությունը որոշում են ծնողները:

ՀԱՐՑ 12
ՁԵՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ

Գրվում է այն ազգությունը, որը նշում է ինքը՝ հարցվողը: Երեխաների ազգությունը որոշվում է ծնողների կողմից: Տվյալների ամփոփման նպատակով օգտագործվում է ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից՝ կիրառման համար հավանության արժանացած ազգությունների կոդավորման ձեռնարկ:

ՀԱՐՑ 13
ՁԵՐ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ԱՅԼ ԼԵԶՈՒ, ՈՐԻՆ ԱԶԱՏ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ ԵՔ

Յուրաքանչյուր անձի համար այս հարցում նախատեսված է 2 տող: Առաջին տողում գրվում է հարցվողի մայրենի լեզուն, որը կնշի ինքը՝ հարցվողը, իսկ երկրորդում՝ մեկ այլ լեզու, որին ազատ տիրապետում է, այսինքն՝ կարող է տվյալ լեզվով կարդալ, գրել և ազատ խոսել, կամ միայն ազատ խոսել: Տվյալների հետագա ամփոփման նպատակով օգտագործվում է ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից՝ կիրառման համար հավանության արժանացած կոդավորման ձեռնարկ:

Եթե հարցվողը դժվարանում է որևէ լեզու իր մայրենի լեզուն համարել, ապա պետք է գրել այն լեզվի անվանումը, որին նա բոլորից ավելի լավ է տիրապետում, կամ որը սովորաբար օգտագործվում է ընտանիքում:

Դեռևս խոսել չկարողացող երեխաների մայրենի լեզուն որոշվում է ծնողների կողմից: Խուլերի և համրերի մայրենի լեզուն համարվում է այն լեզուն, որով նրանք կարդում և գրում են, կամ որը գործածվում է նրանց տնային տնտեսությունում, կամ որով նրանք առավելապես շփվում են այլ անձանց հետ:

Եթե հարցվողը բացի մայրենի լեզվից ոչ մի այլ լեզվի ազատ չի տիրապետում՝ երկրորդ տողում գրվում է «ոչ»:

ՀԱՐՑ 14
ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱՆԻՑ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՔ ԲՆԱԿՎՈՒՄ ԱՅՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ

Այս հարցի վերաբերյալ դրական պատասխան ստանալու դեպքում հաշվարարը գրում է «այո» պատասխանին համապատասխանող [1] նույնականացման կոդը, իսկ բացասական պատասխանի դեպքում «ոչ»-ին համապատասխանող [2] կոդը: Ընդ որում բնակվելու անընդհատությունը չի խախտվում.

- միևնույն տարածքի (նախկին վարչական շրջանի) սահմաններում մի գյուղական բնակավայրից մյուսը տեղափոխվելու դեպքում,

- տվյալ բնակավայրից ժամկետային զինծառայության և արտասահման գործուղման մեկնելու դեպքում,
- տվյալ բնակավայրից բոլոր այն մեկնումների դեպքում, որոնք կապված չեն մշտական բնակավայրը փոխելու հետ:

Բնակվելու անընդհատությունը կախված չէ գրանցման առկայությունից և դրա բնույթից (մշտական կամ ժամանակավոր) և այդ նույն բնակավայրի սահմաններում հասցեն փոխելուց:

14-րդ հարցի «Այո» պատասխանի դեպքում անցնել 18-րդ հարցին, «ոչ» պատասխանի դեպքում՝ լրացնել15,16,17-րդ հարցերի պատասխանները

ՀԱՐՑ 15
1988 Թ.- ԻՑ ՍԿՍԱԾ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ ՓՈԽԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ՝ ՍՏԻՊՎԱԾ ԵՔ ԵՂԵԼ ՓՈԽԵԼ ԱՅՆ

Հարցի վերաբերյալ հնարավոր պատասխանները բերված են 15-րդ սյունակից ելնող սլաքի ուղղությամբ տեղադրված վանդակում: «Այո» պատասխանը լրացվում է 1988թ.-ից սկսած՝ երկրաշարժի կամ Ղարաբաղյան հակամարտությամբ պայմանավորված բնակության վայրը հարկադրաբար փոխած անձանց, ինչպես նաև հետագայում այլ երկներից հարկադրաբար տեղահանված անձանց: Նման դեպքերում նախատեսված են «Այո» պատասխանի հետևյալ հնարավոր հուշումները.

1.ՀՀ սահմանամերձ տարածքներից պատերազմական գործողությունների հետևանքով
2.ՀՀ տարածքներից երկրաշարժի հետևանքով
3.Ադրբեջանից բռնի տեղահանված
4.ԼՂ-ից հարկադիր տեղահանված
5.Այլ երկրներից հարկադիր տեղահանված

Հաշվարարը հարցվողին ներկայացնում է դրանք և 15-րդ հարցի պատասխանը լրացնում է՝ գրելով նրա կողմից նշված հուշմանը համապատասխանող կոդը: Եթե 1988թ.-ից հետո անձի տեղափոխությունը կապված չի եղել վերը նշված պատճառներից ոչ մեկի

հետ, ապա հաշվարարը լրացնում է «ոչ» պատասխանին համապատասխանող նույնականացման [6] կոդը:

ՀԱՐՑ 16
ՁԵՐ ՆԱԽՈՐԴ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

Յուրաքանչյուր անձի համար այս հարցի պատասխանի համար նախատեսված է երկու տող:

Եթե հարցվողի նախորդ բնակության վայրը եղել է Հայաստանի տարածքում, ապա պատասխանների համար նախատեսված առաջին տողում գրվում է նախորդ բնակությանը համապատասխանող մարզի անվանումը, իսկ երկրորդում՝ բնակավայրի անվանումը:

Արտասահմանից եկածների համար (այդ թվում ԱՊՀ երկրներից) առաջին տողում լրացվում է այն երկրի անվանումը, որտեղ նախկինում հարցվողը բնակվել է, իսկ երկրորդ տողը չի լրացվում:

ՀԱՐՑ 17
ՏԱՐԵԹԻՎԸ, ՈՐԻՑ ՍԿՍԱԾ ԱՆԸՆԴՀԱՏ ԲՆԱԿՎՈՒՄ ԵՔ ԱՅՍՏԵՂ

Այս սյունակում գրվում է տարեթիվը (օրինակ՝ 1946,1981,2000 և այլն), որից սկսած հարցվողն անընդհատ բնակվում է տվյալ քաղաքում կամ տարածքի (նախկին վարչական շրջանի) գյուղական բնակավայրում: Տվյալ բնակավայրից այլ բնակավայր մշտական բնակության մեկնած անձանց համար, ովքեր նորից ետ են վերադարձել, նշվում է վերադառնալու տարեթիվը, որից սկսած նրանք անընդհատ բնակվում են այդ բնակավայրում:

ՀԱՐՑ 18
ՁԵՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
(ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ)

Հարցումը սկսելուց առաջ հաշվարարը հանձնում է հարցվողին գոյության միջոցների աղբյուրների ցանկով քարտը: Այդ ցանկից հարցվողը ընտրում է գոյության երկու միջոց, դրանցից մեկը նախընտրելով՝ որպես հիմնական (սյունակ «18ա»), իսկ մյուսը՝ որպես երկրորդային (սյունակ «18բ»): Ստացված պատասխանների հիման վրա «18ա» և «18բ» սյունակներում հաշվարարը գրում է ընտրված

գոյամիջոցներին համապատասխանող հուշումների նույնականացման կոդերը:

01. «Աշխատանք (բացառությամբ անձնական տնտեսությունում)» հուշմանը համապատասխանող կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր ունեն դրամական արտահայտությամբ կամ բնամթերքով վարձատրվող աշխատանք, կամ եկամտաբեր զբաղմունք, անկախ իրենց գործունեության դիմաց վարձատրման կամ եկամտի ստացման ժամկետից:

02. «Աշխատանք անձնական տնտեսությունում» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր զբաղված են իրենց օժանդակ տնտեսությունում (տնամերձ հողամասում) գյուղատնտեսական աշխատանքներով և/կամ անասունների խնամքով: Այս աղբյուրը նշվում է ոչ միայն վաճառքի նպատակով գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվածների համար, այլ նաև այն անձանց համար, ովքեր այն արտադրում են սեփական տնտեսությունում օգտագործելու համար, եթե այդպիսի գործունեությունը *էական ներդրում է ապահովում տնային տնտեսության ընդհանուր սպառման մեջ:*

03. «Եկամուտ սեփականությունից» գրվում է այն անձանց համար, ովքեր՝

- ավանդատուներ, վարկատուներ են և եկամուտ են ստանում տոկոսների ձևով՝ իրենց դրամական ավանդների, վարկերի օգտագործման, փոխառությունների և այլնի դիմաց,
- բաժնետերեր են և դիվիդենտներ են ստանում բաժնետիրական ընկերությունից, իրացված բաժնետոմսերի կուրսի տարբերությունից և այլ ձևերով,
- հողամասը, անշարժ գույքը և այլն վարձակալության են տալիս և ստանում են եկամուտ վարձավճարի ձևով:

04.«Կրթաթոշակ» հուշման կոդը գրվում է կրթաթոշակ ստացող սովորողների համար:

05.«Կենսաթոշակ» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր ստանում են կենսաթոշակ՝ ընդհանուր աշխատանքային, ընդհանուր տարիքային, արտոնյալ պայմաններով՝ բազմազավակ մայրերի, մանկուց հաշմանդամ երեխաների խնամած մայրերի, հայրենական պատերազմի մասնակիցների, հաշմանդամության, ինչպես նաև սոցիալական կենսաթոշակ՝ մանկուց հաշմանդամների, հայրենական պատերազմի և նրանց հավասարեցված հաշմանդամների, զինծառայության ժամանակ հաշմանդամ դարձած, զոհված զինծառայողների զծով կենսաթոշակ ստացող ընտանիքների (ներառյալ պատերազմում): Ընդ որում, կերակրողին կորցնելու դեպքում՝ երեխաներին նշա-

նակված կենսաթոշակը, նշվում է երեխաների համար, այլ ոչ թե մոր կամ հոր համար, նույնիսկ եթե նրանք համարվում են այդ կենսաթոշակը ստացողները, իսկ ընտանիքի համար նախատեսված կենսաթոշակը գրվում է նրան, ով այն ստանում է (օրինակ՝ զոհված զինծառայողների գծով ընտանիքներին նշանակված կենսաթոշակը):

06. «Նպաստ (բացի գործազրկության նպաստից)» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր ստանում են ամենամսյա սոցիալական նպաստ (օրինակ՝ աղքատության ընտանեկան, միանվագ դրամական, երեխայի միչև երկու տարեկան դառնալը խնամելու համար և այլն):

07. «Գործազրկության նպաստ» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր գրանցված են զբաղվածության ծառայությունում որպես գործազուրկ և ստանում են գործազրկության նպաստ, ինչպես նաև նյութական օգնություն՝ զբաղվածության ֆոնդի միջոցներից:

08. «Պետական ապահովության (պահպանության) ներքո» հուշման կոդը գրվում է մանկատների սաների համար, գիշերօթիկ դպրոցների սովորողների, ծերերի և հաշմանդամների՝ տուն-ինտերնատներում ապրողների, ինչպես նաև պետական ապահովության տակ գտնվող այլ անձանց համար:

09. «Այլ դրամական օգնություն (պետական աղբյուրներից)» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր պետական (այդ թվում համայնքային) աղբյուրներից ստանում են դրամական օգնություն՝ աշխատանքի հետ ոչ մի առնչություն չունեցող իրադարձություններով պայմանավորված:

10. «Դրամական օգնություն (ոչ պետական աղբյուրներից)» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր պարբերաբար, անհատույց դրամական միջոցներ են ստանում ոչ պետական աղբյուրներից, *օրինակ՝ ազգականներից և ոչ ազգականներից, կազմակերպություններից* և այլն:

11. «Խնամքի տակ» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր ապրում են ազգականների կամ այլ անձանց միջոցներով, ինչպես նաև նրանց համար, ում ալիմենտ է վճարվում: *Օրինակ, եթե ալիմենտը վճարվում է անչափահաս երեխաներին՝ ովքեր հանդիսանում են ալիմենտ ստացողները, ապա «խնամքի տակ» հուշման կոդը գրվում է երեխաների, այլ ոչ թե մոր կամ հոր համար:*

12. «Այլ աղբյուր» հուշման կոդը գրվում է միայն այն անձանց համար, ում գոյության միջոցների աղբյուրը վերը թվարկված չէ (օրինակ՝ խնայողություն և այլն):

19, 20, 21-րդ հարցերը լրացվում է 7 և բարձր տարիքի անձանց համար

ՀԱՐՑ 19
ՁԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԿԱՄ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ *)

Գիտական աստիճան ունեցող անձանց համար գրվում է *«գիտությունների դոկտոր» կամ «գիտությունների թեկնածու»* հուշումներից մեկին համապատասխանող կոդը:

Արտերկրներում կրթություն ստացածների համար գրվում է այն հուշման կոդը, որը համապատասխանում է իրենց ստացած կրթական մակարդակին:

«Հետբուհական մասնագիտական» հուշման կոդը գրվում է ասպիրանտուրա, ինտերնատուրա, օրդինատուրա, շարունակական մագիստրատուրա ավարտած անձանց համար:

«Բարձրագույն մասնագիտական» հուշման կոդը գրվում է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա ավարտածների համար: *«Բարձրագույն մասնագիտական»* հուշման կոդը գրվում է նաև բակալավրատուրա և մագիստրատուրա ավարտածների համար:

«Թերի բարձրագույն» հուշման կոդը գրվում է բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ու սովորած և ուսման ժամկետի կեսից ավելին անցած, ինչպես նաև ուսումնական դասընթացն ամբողջությամբ ավարտած, որակավորման պետական քննությունները չհանձնած և/կամ ավարտական դիպլոմային աշխատանքները չպաշտպանած անձանց համար: Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող և նախկինում սովորած ու ուսուցման ժամկետի կեսը կամ կեսից պակասն անցած անձանց գրվում է այն կրթական մակարդակին համապատասխանող կոդը, որը նրանք ունեցել են մինչ ԲՈՒՀ ընդունվելը (միջին մասնագիտական կամ ընդհանուր միջնակարգ և այլն):

«Միջին մասնագիտական» հուշման կոդը գրվում է տեխնիկում, քոլեջ կամ դրանց հավասարեցված այլ պետական և ոչ պետական մի-

---

**)Հարցի պատասխանը լրացնելիս նկատի է առնվում հարցվողի ունեցած կրթական ամենաբարձր մակարդակը հարցման պահին, հիմք ընդունելով,համապատասխան վկայականի առկայությունը:*

ջին մասնագիտական ուսումնական հաստատություն (մանկավարժական, բժշկական ուսումնարան և այլն) ավարտած և միջին մասնագիտական որակավորում ստացած անձանց համար:

«Նախնական մասնագիտական» հուշման կոդը գրվում է հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական կրթություն ստացած (արհեստագործական, պրոֆտեխնիկական, ճյուղային պրոֆեսիոնալ, տեխնիկական ուսումնարաններ ավարտած) անձանց համար:

«Ընդհանուր միջնակարգ» հուշման կոդը գրվում է միջնակարգ հանրակրթական դպրոց (այդ թվում առանձին առարկաների խորացված ուսուցմամբ), վարժարան, գիմնազիա և միջնակարգ հանրակրթական ուսումնական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատություններ ավարտածներին:

«Ընդհանուր հիմնական» հուշման կոդը գրվում է հիմնական հանրակրթական դպրոցն ավարտած և համապատասխան ավարտական վկայական ստացած (8-րդ դասարան ավարտած) անձանց համար:

«Ընդհանուր տարրական» հուշման կոդը գրվում է տարրական դասընթացն ավարտածների համար:

«Չունի տարրական» հուշման կոդը գրվում է 7 և բարձր տարիքի (ինչպես սովորող, այնպես էլ չսովորող) տարրական կրթություն չունեցող, սակայն որևէ լեզվով գրել, կարդալ կամ միայն կարդալ (թեկուզ ոչ արագությամբ) իմացող անձանց համար:

Ընդհանուր հիմնական, տարրական և տարրականից ցածր կրթական մակարդակները որոշելիս անհրաժեշտ է օգտվել միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն չստացած անձանց կրթական մակարդակը որոշելու (ավարտած դասարանների թվով զուգորդված) «օժանդակ աղյուսակից»(*տես՝ հավելված 2*):

Հեռակա և դրսեկային կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ավարտելը, ինչպես նաև էքստեռնատը հավասարեցվում է համապատասխան ուսումնական հաստատություն (կամ համապատասխան ուսումնական ծրագրեր) ավարտելուն:

Ընդհանուր կրթություն չտվող ուսումնական հաստատություններում սովորողների և ավարտածների համար (օրինակ՝ վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ և այլն) նշվում է այն կրթությունը, որը նրանք ստացել են մինչ այդ դասընթացներ հաճախելը:

ՀԱՐՑ 20
ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՏԱՌԱՃԱՆԱՉ Ե՞Ք

Տարրական ընդհանուր կրթություն չունեցողների համար, այսինքն այն անձանց, ում 19-րդ հարցում լրացվել է «չունի տարրական» հուշմանը համապատասխանող 11 նույնականացման կոդը, հաշվարարը հարցնում է՝ արդյ՞ոք տվյալ անձը տառաճանաչ է:

Տառաճանաչ են համարվում այն անձինք, ովքեր կարող են որևէ լեզվով կարդալ և հասկանալ կարդացածը: Այս հարցին «այո» պատասխանի դեպքում գրվում 1 նույնականացման կոդը, «ոչ»-ի դեպքում՝ 2 կոդը:

ՀԱՐՑ 21
ՍՈՎՈՐՈՒՄ ԵՔ ՈՐԵՎԷ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցերեկային, հեռակա և դրսեկային ուսուցմամբ կրթական ծրագրով (ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական ուսումնական հաստատություններում) սովորողների համար, անկախ այն բանից՝ նրանք սովորում են արտադրությունից կտրված կամ առանց կտրվելու, գրվում է պատասխանների համար առաջարկված հուշումներից որևէ մեկին համապատասխանող նույնականացման կոդը:

«Հետբուհական մասնագիտական» հուշման կոդը գրվում է ուսումնական կենտրոններում՝ դոկտորանտի ծրագրով սովորող անձանց համար, ինչպես նաև ԲՈՒՀ-երի, գիտական հիմնարկների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում համապատասխան կրթական ծրագրերով սովորողների համար:

«Բարձրագույն մասնագիտական» հուշման կոդը գրվում է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում (ինստիտուտներում, ակադեմիաներում, համալսարաններում, կոնսերվատորիաներում և նրանց հավասարեցված բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատություններում) սովորողների համար:

«Միջին մասնագիտական» հուշման կոդը գրվում է պետական և ոչ պետական տեխնիկումներում, քոլեջներում և դրանց հավասարեցված միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովո-

ողների (մանկավարժական, բժշկական ուսումնարան և այլն) համար:

«Հանրակրթական» հուշման կոդը գրվում է հիմնական և հանրակրթական միջնակարգ, տարրական դպրոցների, գիմնազիաների, վարժարանների, հատուկ գիշերօթիկներում սովորողների, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական զարգացման պակաս ունեցող երեխաների դպրոցներում սովորողների համար:

«Լրացուցիչ կրթության» հուշման կոդը գրվում է ընդհանուր կրթություն չտվող դպրոցներում (օրինակ, ուսումնական հաստատություններին կից նախապատրաստական դասընթացներ, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ) և ուսման մինչև վեց ամիս ժամկետով դասընթացներում սովորողների համար:

22-32-րդ հարցերը լրացվում են միայն 15 և բարձր տարիքի անձանց համար

22 և 23-րդ հարցերը լրացվում են միայն կանանց համար

ՀԱՐՑ 22
ՔԱՆԻ ԵՐԵԽԱ ԵՔ ԴՈՒՔ ԾՆՆԴԱԲԵՐԵԼ

15 և բարձր տարիքի կանաց համար (անկախ մարդահամարի պահին նրանց ամուսնական վիճակից)՝ գրվում է ծննդաբերած երեխաների ընդհանուր թվաքանակը (չհաշվելով մեռելածինները), անկախ նրանից՝ բոլոր երեխաները հաշվառման պահին ողջ են, թե՝ ոչ, և գտնվում են արդյոք նրանց տնային տնտեսությունների կազմի մեջ, թե ապրում են առանձին: Ընդ որում, որդեգրված և խնամակալված երեխաները, ինչպես նաև ամուսնու նախկին ամուսնությունից ունեցած երեխաները, տվյալ կնոջ ծննդաբերած երեխաների թվաքանակի մեջ չեն հաշվառվում:

Եթե կինը ոչ մի երեխա չի ծննդաբերել, ապա գրվում է [ ][0]:

ՀԱՐՑ 23
ՆՐԱՆՑԻՑ ՔԱՆԻՍՆ ԵՆ ՈՂՋ

Կանանց ծննդաբերած երեխաների ընդհանուր թվաքանակից 23- րդ հարցին համապատասխանող սյունակում գրվում է մարդահամարի հաշվառման պահի դրությամբ ողջ երեխաների թվաքանակը:

Եթե նրա ծնած երեխաներից մարդահամարի պահին ոչ մի երեխա ողջ չի մնացել, ապա գրվում է՝ [ ][0]:

15 և բարձր տարիքի անձանց համար

ՀԱՐՑ 24
ՁԵՐ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

«Երբեք չամուսնացած» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր երբեք ամուսնացած չեն եղել:

«Ամուսնացած (գրանցված)» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր մարդահամարի պահին ամուսնացած են, և նրանց ամուսնությունը գրանցված է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում (այսուհետև՝ զագս):

«Ամուսնացած փաստացի (առանց գրանցման)» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր փաստացի ամուսնացած են, սակայն նրանց ամուսնությունը գրանցված չէ զագս-ում:

«Ամուսնացած, սակայն առանձին ապրող» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր ամուսնացած են (գրանցված կամ չգրանցված), սակայն ապրում են առանձին:

«Այրի/կնակորույս» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, որոնց ամուսնությունը (անկախ նրանից ամուսնությունը գրանցված է եղել զագս-ում, թե ոչ) դադարել է ամուսիններից մեկի մահվան պատճառով:

«Ամուսնալուծված (գրանցված)» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, որոնց ամուսնությունը գրանցված է եղել զագս-ում, բայց ներկայումս այդ անձինք ամուսնալուծված են, և այդ փաստերը գրանցված են զագս-ում:

«Ամուսնալուծված փաստացի (առանց գրացման)» հուշման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր նախկինում ամուսնացած են

եղել (գրանցված կամ չգրանցված), բայց ներկայումս ամուսնալուծված են, և այդ փաստերը գրանցված չեն զագս-ում:

Ամուսնու/կնոջ հերթական համարը (սյունակ «24բ»)

Այս հարցը լրացվում է առանց լրացուցիչ հարցման՝ միայն ամուսնացած անձանց համար: Ամուսնու համար գրվում է կնոջ, իսկ կնոջ համար՝ ամուսնու հերթական համարը, որը նշված է մարդահամարի հարցաթերթի Ա սյունակում:

ՀԱՐՑ 25
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՑ 9-Ը ՈՒՆԵՑԵ՞Լ ԵՔ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՄ ԱՅԼ ԵԿԱՄՏԱԲԵՐ ԶԲԱՂՄՈՒՆՔ

«Այո» հուշման կոդին համապատասխանող 1 նույնականացման կոդը գրվում է այն անձանց համար, ովքեր 2001թ. հոկտեմբերի 3-9-ը՝

ա) աշխատել են գեթ մեկ ժամ, անկախ նրանից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր, սեզոնային, պատահական կամ վճարվող այլ աշխատանք, ինչպես նաև ունեցել են եկամտաբեր ոչ վարձու աշխատանք, ինքնուրույն կամ մեկ, կամ մի քանի գործընկերների հետ, ինչպես վարձու աշխատողներ ընդգրկելով, այնպես էլ առանց ընդգրկելու, անկախ գործունեության համար անմիջական աշխատավարձի կամ եկամտի ստացման ժամկետից,

բ) աշխատել են ընտանիքի անդամի, ազգականի կազմակերպությունում, գյուղացիական տնտեսությունում՝ առանց վարձատրման,

գ) աշխատել են անձնական (օժանդակ) տնտեսությունում՝ գյուղատնտեսական աշխատանքով և/կամ անասունների խնամքով, եթե այն ունեցել է շուկայական ուղղվածություն:

դ) ժամանակավորապես բացակայել են աշխատանքից պահպանելով պաշտոնական կապն աշխատավայրի հետ:

Աշխատանքից ժամանակավորապես բացակայություն է համարվում՝

- հիվանդությունը կամ վնասվածքը, հիվանդի խնամքը,
- ամենամյա արձակուրդը կամ հանգստյան օրերը, լրացուցիչ արձակուրդը, արտաժամյա կամ տոն (ոչ աշխատանքային) օրերի դիմաց տրված հանգստյան օրերը,
- հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի համար օրենքով սահմանված արձակուրդը,

- հերթափոխային կամ այլ առանձնահատուկ բնույթի աշխատանքը,
- արձակուրդը ղեկավարության (ադմինիստրացիայի) նախաձեռնությամբ, ինչպես աշխատավարձի լրիվ կամ մասնակի պահպանմամբ, այնպես էլ առանց պահպանման,
- գործադուլները:

2001թ. հոկտեմբերի 3-ից 9-ը աշխատանք կամ այլ եկամտաբեր զբաղմունք ունեցող ուսանողներն ու կենսաթոշակառուները հաշվեգրվում են որպես աշխատանք ունեցողներ, և նրանց համար ևս գրվում է «այո» հուշմանը համապատասխանող կոդը:

«Ոչ» հուշման կոդը գրվում է 2001թ. հոկտեմբերի 3-9-ը աշխատանք կամ այլ եկամտաբեր զբաղմունք չունեցող անձանց համար, ինչպես նաև.

- իր տնային տնտեսության ներսում ծառայություններ մատուցող (տան մաքրություն, լվացք, երեխայի դաստիարակություն, մեծահասակների խնամք և այլն) անձանց,
- հասարակական կամ կամավոր սկզբունքներով՝ առանց վարձատրման, առանձին անձանց կամ բարեգործական ընկերություններին ծառայություններ մատուցած անձանց,
- որևէ ձեռնարկության կամ ընկերության փոխառություններին տնօրինող, սակայն դրա տնտեսական գործունեությանը չմասնակցող անձանց,
- մուրացկանությամբ զբաղվող անձանց (նույնիսկ եթե այն եկամտաբեր է) համար:

ՀԱՐՑ 26
ՈՐՆ Է ՁԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԻՄՆԱՐԿԻ (ԿԱՄ ԴՐԱ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

Այս հարցի պատասխանը լրացվում է 2001թ. հոկտեմբերի 3-9-ը աշխատանք կամ այլ եկամտաբեր զբաղմունք ունեցող անձանց (ում համար 25-րդ հարցում գրվել է 1 կոդը) համար: Պատասխանը լրացնելիս անհրաժեշտ է հիշել, որ հարցվողի աշխատատեղի՝ հիմնարկի, կազմակերպության կամ դրա մասնաճյուղի գործունեության տեսակը պետք է բնութագրել պարզ և ճշգրիտ, մանրամասնելով դրա և ընդհանուր, և առանձնահատուկ գործունեությունը, որպեսզի հարցաթերթի հետագա մշակման ժամանակ (այսինքն, երբ ամփոփման համար բառերով գրված տնտեսական գործունեության տեսակը փոխարին-

վում է նույնականացման թվային կոդով) հնարավոր լինի որոշել տնտեսական գործունեության տեսակը[3]):

Հիմնական համարվում է այն աշխատանքը/գործունեությունը, որը հարցվողն ինքն է իր համար համարում հիմնական: Եթե հարցվողը դժվարանում է որոշել հիմնական աշխատանքը, ապա հիմնական կարելի է համարել այն աշխատանքը, որտեղ նշված շաբաթվա ընթացքում նա աշխատել է առավելագույն ժամեր, կամ՝ որտեղից ավելի մեծ եկամուտ է ստացել:

Այն անձանց համար, ովքեր 2001թ.հոկտեմբերի 3-9-ը փոխել են իրենց հիմնական աշխատատեղը, գրվում է այն աշխատատեղի գործունեության տեսակը, որը նրանք կատարել են նշված շաբաթվա վերջին:

Այն անձանց համար, ովքեր աշխատել են *կառուցվածքային ստորաբաժանում չունեցող տնտեսական միավորում* (օր՝ խանութ, ֆերմա, հանք և այլն) գրվում է դրանց հիմնական գործունեությունը: *Օրինակ՝ այն անձանց համար, ովքեր աշխատել են «Կաթ» կաթնամթերքի մանրածախ առևտրի մասնագիտացված խանութում, գրվում է «կաթնամթերքի մանրածախ առևտուր՝ մասնագիտացված խանութում»: Այն անձանց համար, ովքեր աշխատել են շարժական վրաններում կամ շուկայում և զբաղված են եղել կաթնամթերքի մանրածախ առևտրով, ապա գրվում է՝ «կաթնամթերքի մանրածախ առևտուր՝ շարժական վրանում կամ շուկայում»:*

Այն անձանց համար, ովքեր աշխատել են *տնտեսական միավորի կառուցվածքային ստորաբաժանումում,* որի գործունեությունն իր բնույթով տարբեր է տնտեսական միավորի գործունեությունից, գրվում է այն ստորաբաժանման հիմնական գործունեությունը, որում աշխատել է հարցվողը: *Օրինակ՝ ծխախոտի գործարանի ճաշարանում աշխատող անձի համար գրվում է «ճաշարանի գործունեությունը» այլ ոչ թե «ծխախոտի արտադրություն»:* Բժիշկների (ներառյալ ատամնաբույժների) համար, ովքեր աշխատել են դպրոցներին, մանկատներին, ծերերի և հաշմանդամների տուն-ինտերնատներին և այլնին կից ամբուլատորիաներում, գրվում է «բժշկական (կամ ատամնաբուժական) ամբուլատոր գործունեություն»:

Բազմապրոֆիլ կազմակերպություններում, օրինակ՝ ֆիրմային խմբում կամ կոնցեռնում աշխատած անձանց համար գրվում է այն

---

[3]) Տվյալների հետագա մշակումն իրականացվելու է միջազգային ստանդարտների համաձայն՝ կիրառելով «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը», որն ընդունվել և գործողության մեջ է դրվել Հայպետստանդարտի կողմից՝ հրաման թիվ 21- Վ առ 12.07. 2001(NACE): Այն ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից կիրառման համար հավանության է արժանացել թիվ 58 որոշմամբ առ 24.07.2001

ստորաբաժանման գործունեության տեսակը, որում աշխատում է հարցվողը:

Կազմակերպություններում, հիմնարկներում աշխատող անձանց համար գրվում է տնտեսական միավորի կամ դրա ստորաբաժանման գործունեությունը, այլ ոչ թե հարցվողի կողմից կատարվող աշխատանքը: *Օրինակ՝ Ցեմենտի գործարանում որպես բեռնատար ավտոմեքենայի վարորդ աշխատող անձի համար գրվում է «ցեմենտի արտադրություն»:*

Եթե հարցվողը դժվարանում է որոշել իր աշխատավայրի գործունեության տեսակը, ապա անհրաժեշտ է պարզել և գրել, թե *ինչ հիմնական արտադրանք է արտադրվում, կամ ծառայություն է մատուցվում* կազմակերպությունում, ստորաբաժանումում կամ սեփական արտադրությունում (տեսակարար կշիռն ամենամեծն է ընդհանուրի մեջ), կամ պարզել դրանց տնտեսական գործունեության ուղղվածությունը:

Եթե հարցվողը հանդիսանում է հիմնարկի, կազմակերպության արհմիության ազատված աշխատակից, ապա գրվում է գործունեության տեսակը՝ «Արհմիութենական գործունեություն»:

Սեփական կազմակերպությունում կամ ձեռնարկում (բիզնեսում) (առանց վարձու աշխատողների ներգրավման կամ ժամանակ առ ժամանակ ներգրավելով) աշխատող անձանց համար գրվում է տնտեսական գործունեության համապատասխան տեսակը (օրինակ՝ «Կոշիկի վերանորոգում», «Կանանց վերնազգեստի կար ու ձև»):

Առանձին քաղաքացիների մոտ վարձով աշխատածների համար գրվում է տնտեսական գործունեության համապատասխան տեսակը, օրինակ՝ մանրածախ առևտրով զբաղված վաճառողին գրվում է «ծխախոտի մանրածախ առևտուր»: Անհատական կարգով վարձված տնային տնտեսության անհատական սպասարկմամբ զբաղվածների (օրինակ՝ քարտուղար, խոհարար, դայակ և այլն)համար՝ գրվում է «տնային տնտեսության սպասարկում» :

Գյուղացիական տնտեսությունում զբաղված անձանց համար գրվում է գործունեության կոնկրետ ուղղվածությունը, *օրինակ՝ «բոստանային կուլտուրաների աճեցում», «բուսաբուծություն և անասնապահություն», «անասնաբուծություն՝ խոշոր եղջերավոր», «անասնաբուծություն՝ մանր եղջերավոր», կամ «անասնապահական մթերքների արտադրություն» և այլն:*

Կազմակերպությունում, հիմնարկում, գյուղացիական տնտեսությունում առանց վարձատրման աշխատող ընտանիքի անդամի կամ ազգականի համար գրվում է այդ կազմակերպության, հիմնարկի, գյուղացիական տնտեսության գործունեության համապատասխան ուղղվածությունը:

Կրոնի սպասավորների, ինչպես նաև կրոնական գործունեությամբ զբաղված անձանց համար գրվում է «կրոնական գործունեություն»:

Կրոնական կազմակերպություններում աշխատող անձանց համար գործունեության տեսակը գրվում է՝ ելնելով արտադրվող արտադրանքի կամ մատուցվող ծառայության տեսակից: Օրինակ՝ կրոնական կազմակերպությունների լրագրերի և ամսագրերի հրատարակությամբ զբաղված անձանց համար գրվում է «լրագրերի և ամսագրերի հրատարակչություն»:

Ժամկետային զինծառայողների համար գրվում է՝ «գտնվում է ժամկետային զինծառայության մեջ»:

Բոլոր չաշխատողների համար անպայմանորեն գրվում է՝ *«ոչ»*:

ՀԱՐՑ 27
ԶԵՐ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՏԵՂՈՒՄ
(կատարվող աշխատանքի բնույթը)

2001թ. հոկտեմբերի 3-9-ը աշխատանք կամ այլ եկամտաբեր զբաղմունք ունեցող բոլոր անձանց համար (ում համար 25-րդ հարցում գրված է «այո» հուշման կոդը) գրվում է նրանց զբաղմունքի[4]) մանրամասն բացատրությունն այն աշխատավայրում, որը նշված է 26-րդ հարցում:

Եթե հարցվողը ժամանակավորապես աշխատել է ոչ ըստ իր հիմնական զբաղմունքի, ապա գրվում է նրա հիմնական զբաղմունքը:

Զբաղմունքը *պետք է գրել մանրամասն՝ նշելով կատարած աշխատանքի բնույթը*: Չի կարելի գրել «վարիչ», «վարպետ», «մեքենավար», «օպերատոր», «կարող» և այլն (քանի որ դրանցից շատերն ունեն միևնույն անվանումը, սակայն պատկանում են գործունեության տարբեր ոլորտների), այլ պետք է գրել, օրինակ՝ «խմբագրության վարիչ», «գրադարանի վարիչ», «ամփոփ աշխատանքների և մարկետինգի բաժնի պետ», «տնտեսական հարցերով խորհրդական», «հորատող վարպետ», «հաշվիչ մեքենաների օպերատոր», «տեսաձայնագրման օպերատոր», «ձեռքի մեքենայով կարող», «բեռնատար ավտոմեքենայի վարորդ», «շինանյութերի խանութի վաճառող» և այլն:

Սեփական կազմակերպությունում կամ ձեռնարկում առանց վարձու աշխատողների ներգրավման կամ ժամանակ առ ժամանակ

---

[4]) Տվյալների հետագա մշակումն իրականացվելու է միջազգային ստանդարտների համաձայն՝ կիրառելով հատուկ մարդահամարների համար ԱՊՀ Վիճկոմի կողմից մշակված «Զբաղմունքների մոդելային բառարան», Մոսկվա - 99

ներգրավելով, աշխատած անձանց համար գրվում է զբաղմունքի (արհեստի) անվանումը, օրինակ՝ «ատամնաբույժ», «դերձակ» և այլն:

«Տարաբանվոր» գրվում է միայն որակավորում չպահանջող տարբեր աշխատանքներով զբաղված անձանց համար (բացի գյուղատնտեսությունից), իսկ մնացած դեպքերում անհրաժեշտ է պարզել աշխատանքի բնույթը և գրել, օրինակ՝ «բեռնակիր»:

Եթե հարցվողը վարում է գյուղացիական տնտեսություն, կախված տնտեսության մասնագիտացումից, գրվում է համապատասխան զբաղմունքը, *օրինակ՝ «գյուղացիական տնտեսություն վարող՝ զբաղված դաշտային և բոստանային կուլտուրաների մշակմամբ», կամ «գյուղացիական տնտեսություն վարող՝ զբաղված թռչնի մսի և ձվի արտադրությամբ» և այլն:* Եթե հարցվողը կատարել է տարբեր աշխատանքներ գյուղատնտեսության մեջ և հստակ չի կարելի դրանք միմյանցից սահմանազատել, ապա գրվում է «զբաղված անասնաբուծությամբ», կամ «զբաղված բուսաբուծությամբ» և այլն:

«Գյուղատնտեսության որակավորում չունեցող բանվոր» գրվում է այն անձանց համար, ովքեր գյուղատնտեսության բնագավառում կատարում են որակավորում չպահանջող աշխատանքներ:

Ընտանիքի անդամին կամ ազգականին պատկանող կազմակերպությունում կամ գյուղացիական տնտեսությունում առանց վարձատրման աշխատած անձանց համար գրվում է այն զբաղմունքը, որով նրանք զբաղված են եղել ժամանակի մեծ մասը: Օրինակ՝ եթե ընտանիքի անդամը ժամանակի մեծ մասը զբաղված է ապրանքների բեռնաթափմամբ, ապա գրվում է՝ «բեռնակիր»:

Ժամկետային զինծառայողների համար գրվում է՝ *«չունի»*:

Աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք չունեցող բոլոր անձանց համար գրվում է՝ *«չունի»*:

ՀԱՐՑ 28
ՀԻՄՆԱԿԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Լրացվում է 2001թ. հոկտեմբերի 3-9-ը աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք ունեցողների (ում համար 25-րդ հարցում գրվել է «այո» հուշման կոդը) համար: Գրվում է որպես պատասխան առաջադրված հուշումներից մեկին համապատասխանող կոդը:

1.«Վարձու աշխատող» են համարվում այն անձինք, ովքեր աշխատում են կազմակերպության, հիմնարկի ադմինիստրացիայի կամ անհատ ձեռնարկատիրոջ հետ կնքված պայմանագրի հիման վրա (գրա-

վոր կամ բանավոր պայմանավորվածության համաձայն) և ստանում են փոխհատուցում աշխատավարձի տեսքով (դրամական կամ բնեղեն արտահայտությամբ): Այս հուշման կոդը գրվում է նաև՝

- ղեկավար պաշտոններում ընտրված, նշանակված կամ հաստատված անձանց,
- կառավարիչներին, տնօրեններին և ղեկավարներին,
- աշխատավարձ ստացող աշակերտներին,
- ընտանիքի անդամների կամ ազգականի ձեռնարկատիրական գործունեության մեջ ընդգրկված՝ աշխատող անձանց, ովքեր աշխատում են աշխատավարձով և օգտվում են այն նույն իրավունքներից և վճարվում են նույն հիմունքներով, ինչպես նույնատիպ աշխատանք կատարող մյուս անձինք,
- կրոնի սպասավորներին:

2. «Գործատու» համարվում են այն անձինք, ովքեր ղեկավարում են իրենց սեփական կազմակերպությունը (բիզնեսը) ինքնուրույն հիմունքներով կամ մեկ կամ մի քանի գործընկերների հետ միասին և իր կազմակերպության աշխատանքների համար մշտապես վարձում են մեկ կամ ավելի աշխատողներ:

Ընդ որում գործընկերները կարող են և լինել, և չլինել նույն ընտանիքի կամ նույն տնային տնտեսության անդամներ:

3. «Կոոպերատիվի (արտադրական) անդամ» են համարվում այն անձինք, ովքեր աշխատում են ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման իրենց սեփական ձեռնարկությունում-կոոպերատիվում և հանդիսանում են ակտիվ (աշխատող) անդամ, մյուս անդամների հետ հավասար իրավունքներով մասնակցում են արտադրության կազմակերպմանը, արտադրանքի իրացմանը, կազմակերպության անդամների միջև եկամուտների բաշխմանը:

Ընդ որում կոոպերատիվում (արտադրական, սպառողական) վարձու աշխատանքով զբաղված քաղաքացին չի հանդիսանում արտադրական կոոպերատիվի անդամ:

4. «Անհատ ձեռնարկատեր» համարվում են այն անձինք, ովքեր վարում են իրենց ձեռնարկը կամ ինքնուրույն իրականացնում են մասնագիտական, ստեղծագործական, առևտրային (կոմերցիոն) կամ այլ գործունեություն, որի համար չեն վարձում, կամ շատ կարճ ժամկետով են վարձում աշխատողներ:

5. «Ինքնազբաղված» են համարվում այն անձինք, ովքեր ինքնուրույն զբաղված են եկամուտ բերող մասնագիտական կամ առևտրային գործունեությամբ, առանց աշխատողների ներգրավման: Առանձին դեպքերում, եթե նույնիսկ ներգրավում են աշխատողներ, ապա այն

մշտական բնույթ չի կրում: Այս խմբի մեջ մտնում են նաև անձնական օժանդակ տնտեսությունում զբաղվածները:

6. «Ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող ընտանիքի անդամ՝ ազգական» համարվում են այն անձինք, ովքեր առանց վարձատրման աշխատում են ընտանիքի անդամին կամ ազգականին պատկանող հիմնարկում, կազմակերպությունում՝ օժանդակելու, օգնելու նպատակով: Նրանք որպես կանոն դրամական կամ բնեղեն փոխհատուցում չեն ստանում, այլ աշխատում են միայն որոշակի պարգևատրման դիմաց կամ ընտանիքի բյուջեի հաշվին:

7. «Գյուղացիական տնտեսության անդամ» համարվում են գյուղացիական տնտեսությունում զբաղված անձինք:

8.«Այլ կարգավիճակ» գրվում է այն անձանց համար, որոնց զբաղվածության կարգավիճակը թվարկվածներից ոչ մեկի մեջ հնարավոր չէ ներառել:

29-32-րդ հարցերը լրացվում են աշխատանք կամ այլ եկամտաբեր զբաղմունք չունեցողների (ներառյալ սովորողների, ուսանողների, կենսաթոշակառուների և նպաստառուների) **համար**

ՀԱՐՑ 29
ՓՆՏՐՈՒՄ ԵՔ ԱՇԽԱՏԱՆՔ

Բոլոր այն անձանց համար, ովքեր փնտրում են աշխատանք կամ փորձում են սեփական գործ կազմակերպել, նշվում է «այո» հուշման կոդը, իսկ այն անձինք, ովքեր աշխատանք չեն փնտրում, նշվում է «ոչ» հուշման կոդը:

Աշխատանք փնտրելու կոնկրետ ձևերն են՝ զբաղվածության ծառայություններին, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակեպությունների ադմինիստրացիաներին դիմելը, թերթերում հայտարարություններ տալը, ծանոթներին, ընկերներին, բարեկամներին դիմելը, սեփական գործ սկսելու գործընթացը (թույլատվության կամ լիցենզիայի ստացումը, աշխատանքի համար տարածք փնտրելը և այլն):

Այս հարցին «այո» պատասխանած անձանց համար լրացվում են 30 և 31-րդ հարցերը, իսկ «ոչ» պատասխանած անձանց համար՝ 32-րդ հարցը

ՀԱՐՑ 30
ՊԱՏՐԱՍՏ ԵՔ ԱՆՑՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԻԿԱ 2 ՇԱԲԱԹՈՒՄ

Այն անձանց համար, ովքեր փնտրում են աշխատանք և համապատասխան աշխատանք առաջարկվելու դեպքում պատրաստ են անցնել աշխատանքի՝ առաջիկա երկու շաբաթվա ընթացքում, գրվում է «այո» հուշմանը համապատասխանող 1 կոդը, իսկ նրանց համար, ովքեր որևէ պատճառից ելնելով նույն ժամանակահատվածում չեն կարող անցնել աշխատանքի՝ գրվում է «ոչ» հուշման կոդը:

ՀԱՐՑ 31
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԵՔ ՓՆՏՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔ

«Այո» հուշմանը համապատասխանող կոդը գրվում է աշխատանք փնտրող այն անձանց համար, ովքեր փնտրում են աշխատանք առաջին անգամ, այսինքն՝ նախկինում ընդհանրապես չեն աշխատել: «Ոչ» հուշմանը համապատասխանող կոդը գրվում է աշխատանք փնտրող այն անձանց համար, ովքեր շատ անգամ են աշխատանք փնտրել:

ՀԱՐՑ 32
ՈՐՆ Է ՊԱՏՃԱՌԸ

Աշխատանք չփնտրող անձանց համար պետք է գրել 32-րդ սյունակին համապատասխանող վանդակում որպես պատասխան առաջարկված (1-8) պատճառներից որևէ մեկին համապատասխանող կոդը:

III ԲԱԺԻՆ՝
«Տնային տնտեսության բնակության պայմանները»

Յուրաքանչյուր տնային տնտեսության համար մարդահամարի հարցաթերթում լրացվում են տեղեկություններ իրենց բնակության պայմանների վերաբերյալ: Եթե մեկ տնային տնտեսության համար կազմվել են մեկից ավելի հարցաթերթեր, ապա (տնային տնտեսության) բնակության պայմանները բաժինը լրացվում է միայն վերջին հարցաթերթում:

Այս բաժնի Բ.1.-Բ.13. հարցերի պատասխանները լրացնելու համար գծանշվում է պատասխանների համար առաջարկված հուշումներից միայն մեկի դիմաց տեղադրված փոքրիկ վանդակը ☑, իսկ Բ.14. և Բ.15. հարցերի լրացման պահանջին համաձայն՝ պատասխանը գրվում է թվային արտահայտությամբ:

Եթե անձը կամ տնային տնտեսությունը բնակտարածություն է վարձել բնակարանի (տան) մի մասում՝ մի սենյակում կամ սենյակի մի մասում և բնակվում է սեփականատիրոջ հետ՝ նույն բնակելի միավորում, ապա այդ բնակարանի բնակության պայմանները լրացվում են միայն տան սեփականատիրոջ համար, իսկ եթե տվյալ տնային տնտեսությունը վարձել է ամբողջ բնակարանը, ապա բնակության պայմանները լրացվում են վարձակալող անձի տնային տնտեսության համար:

Բ 1

ԲՆԱԿԵԼԻ ՄԻԱՎՈՐՈՎ*) ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Նշվում է թվարկված երեք հուշումներից որևէ մեկը:

1 ☐ Ունի - Եթե տվյալ տնային տնտեսությունը ապահովված է տնով կամ բնակարանով,

2 ☐ Չունի - Եթե տվյալ տնային տնտեսությունը չունի տուն (բնակարան) և բնակտարածություն է վարձում առանձին քաղաքացիների մոտ, կամ ունի պայմանավորվածություն որևէ ազգականի կամ ծանոթի հետ՝ վերջինիս տանը (բնակարանում) ժամանակավորապես բնակվելու մասին,

---

* *Պարզաբանումը տես՝ էջ 21*

3 ☐ Անօթևան - Որոշակի հասցե չունեցողների (անօթևաններ-ի, թափառաշրջիկների) համար:

Անօթևաններ են համարվում այն անձինք, ովքեր չունեն բնակության որոշակի տեղ, իրենց ոչ մեծ ունեցվածքը կրում են իրենց հետ և գիշերում են փողոցներում, մուտքերում, այգիներում, կիսաքանդ և լքված շինություններում և այլուր (ընդ որում նշված բոլոր վայրերը նրանց համար պատահական են):

Բ 2

ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

1 ☐ Անհատական տուն - Եթե մեկ տնային տնտեսությունը բնակվում է մեկ ամբողջ բնակելի տան**) մեջ՝ անկախ դրա սեփականության ձևից,

2 ☐ Անհատական տան մասը - Եթե տնային տնտեսությունը զբաղեցնում է մեկ ամբողջ բնակելի տան (շինության) մի մասը,

3 ☐ Առանձին բնակարան - Եթե տնային տնտեսությունը բնակվում է առանձին բնակարանում*),

Ընդ որում, եթե տնային տնտեսությունը բնակվում է անհատական տանը կամ առանձին բնակարանում, սակայն զբաղեցնում է տան կամ բնակարանի տարածության միայն մի մասը, իսկ մնացած մասը տալիս է վարձով, ապա համարվում է, որ այդ տնային տնտեսությունն ապրում է անհատական տանը կամ առանձին բնակարանում,

4 ☐ Ընդհանուր (կոմունալ) բնակարան - Եթե բնակարանում բնակվում են մեկից ավելի տնային տնտեսություններ, ինչպես նաև ընդհանուր միջանցք ունեցող տներում, բնակարաններում, որոնք հանրակացարաններ չեն,

5 ☐ Տնակ կամ ժամանակավոր կացարան - Եթե տնային տնտեսությունը բնակվում է տնակում, վագոնում, վագոն-բնակարանում և ժամանակավոր կացարան հանդիսացող նմանատիպ այլ կառույցում,

---

** *Բնակելի տուն է համարվում բնակավայրի տարածքում առանձին հողամասի վրա կառուցված, առանձին փոստային համար ունեցող, բնակելի, օժանդակ և կոմունալ հարմարություններով, իր տնտեսական շինություններով կառույցը:*

Առանձին բնակարան համարվում է՝ մշտական բնակության համար օգտագործվող և սարքավորված, մեկ կամ ավելի բնակելի սենյակներից բաղկացած, այլ շինություններից հիմնապատերով բաժանված և դեպի աստիճանավանդակ, ընդհանուր միջանցք, ընդհանուր սրահ կամ անմիջականորեն փողոց, բակ ինքնուրույն ելք ունեցող բնակելի շինությունը, եթե այդտեղ բնակվում է մեկ տնային տնտեսություն:

6 ☐ Հանրակացարան - Եթե տնային տնտեսությունը բնակվում է հանրակացարանում (անկախ կառույցի տիպից՝ բնակարանային, ընդհանուր միջանցքով, ինչպես նաև այն բանից, թե զբաղեցնում է արդյոք մեկ սենյակ, սենյակի մի մասը կամ միայն մահճակալ):

Հանրակացարանային տիպի բնակելի կառույցների շարքին են դասվում այն տները, որոնցում շինությունների և օգտակար տարածության ամբողջ կամ մեծ մասը նախատեսված և կահավորված են ընդհանուր սենյակներում համատեղ բնակվող, որպես կանոն միմյանց հետ ազգակցական հարաբերություններով չկապված, բայց բարեկարգման և սարքավորումների բոլոր տեսակները (հանգստյան սենյակներ, պարապմունքների համար սենյակներ, խոհանոցներ, լոգասենյակներ, սանիտարական սենյակներ և այլն) համատեղ օգտագործող անձանց համար:

7 ☐ Համատեղ բնակության (ինստիտուցիոնալ) կազմակերպություն - Ծերերի և հաշմանդամների տուն-ինտերնատներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում մշտապես բնակվողների համար (բացի սպասարկող անձնակազմից), ինչպես նաև մենաստաններում, զորանոցներում և նմանատիպ այլ հիմնարկներում խմբային տնային տնտեսությամբ բնակվողների համար,

8 ☐ Այլ բնակելի շինություն – Եթե տնային տնտեսությունը բնակվում է հյուրանոցում, հանգստյան տանը, մոթելում, վարչական շենքերում և մշտական բնակության համար չնախատեսված նմանատիպ այլ շինություններում, որոնք թվարկված չեն:

Բ.3
ԵՐԲ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գծանշվում է որպես պատասխան առաջարկված ժամանակահատվածներից որևէ մեկին համապատասխանող վանդակը: Ընդ որում տան կառուցման ժամանակաշրջանը որոշելիս հաշվի է առնվում այն տարեթիվը, երբ որ տունը (շինությունը) շահագործման է հանձնվել:

Օրինակ՝ եթե բնակելի տան շինարարությունը սկսվել է 1979թ. և ավարտվել է 1981թ. ապա նշվում է ավարտվելու տարեթիվը *«1981-1990թթ»* հուշումը: Տան վերակառուցման, վերնաշենքի կառուցման, ընդլայնման դեպքում՝ շահագործման հանձնելու տարին համարվում է սկզբնական կառուցման տարին:

Բ. 4
ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ՇԻՆԱՆՅՈՒԹԸ

1 ☐ Քար, աղյուս - Եթե տունը կառուցված է քարից կամ աղյուսից,

2 ☐ Երկաթբետոն (պանել, մոնոլիտ), բլոկ - Եթե տունը կառուցված է բետոնե կամ երկաթբետոնե բլոկներից և պանելներից, խարամաբլոկներից կամ խարամալցոնվածքներից,

3 ☐ Փայտ - Եթե տան պատերը փայտից են (քառակող կամ տաշված) կամ փայտե ամբողջական հավաքովի պանելներից, ինչպես նաև այն դեպքում, եթե փայտյա տունը երեսպատված է աղյուսով,

4 ☐ Խառնակազմ նյութ - Եթե առաջին հարկը (տան կեսը կամ մի մասը) աղյուսից կամ քարից է, իսկ երկրորդ հարկը (կեսը կամ միայն մի մասը)՝ փայտից:

Եթե տան պատերը կառուցված են մի քանի տեսակի նյութերից, ապա դրանք անհրաժեշտ է վերագրել որմնանյութերի այն խմբին, որոնք տվյալ կառույցում գերակշռում են:

5 ☐ Այլ-Թվարկված շինանյութերի բացակայության դեպքում:

Բ. 5
ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

1 ☐ Կենտրոնական ջեռուցում - Եթե բնակելի միավորը սարքավորված է խմբային, թաղամասային կամ միացյալ կաթսայատնից, ՋԷԿ-ից մատակարարվող շոգեջեռուցմամբ,

2 ☐ Գազ - Եթե բնակելի միավորը հիմնականում ջեռուցվում է գազով,

3 ☐ էլեկտրականություն - Եթե բնակելի միավորը ջեռուցվում է էլեկտրական տաքացուցիչներով, հատակադիր էլեկտրասալիկներով և նմանատիպ էլեկտրական այլ սարքավորումներով,

4 ☐ Ածուխ - Եթե բնակելի միավորը ջեռուցելու համար օգտագործվում է ածուխ,

5 ☐ Փայտ - Եթե բնակելի միավորը ջեռուցելու համար, որպես հիմնական վառելիք օգտագործվում է փայտը,

6 ☐ Աթար - Եթե ջեռուցման հիմնական միջոցը հանդիսանում է աթարը.

7 ☐ Նավթ,նավթամթերք - Եթե բնակելի միավորը ջեռուցելու համար օգտագործվում է նավթ և/կամ այլ նավթամթերքներ,

8 ☐ Այլ - Եթե օգտագործվում են այլ վառելանյութեր, բացի թվարկվածներից:

Բ.6
ԿԵՐԱԿՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԱՌԵԼԻՔԸ

1 ☐ էլեկտրականություն - Եթե եփելու համար օգտագործվում է հատակադիր էլեկտրասալիկ, կամ էլեկտրական օջախ, որը տեղադրված է առանձնացված խոհանոց ունեցող բնակարանում,

2 ☐ Գազ - Եթե օգտագործվում է բնական կամ հեղուկ (բալոնով) գազ մատակարարվող հատակադիր գազօջախ,

3 ☐ Նավթ - Եթե օգտագործվում են տարբեր նավթավառներ,

4 ☐ Փայտ - Եթե վառվում է փայտօջախ կամ օգտագործվում է վառարան, որի վառելանյութն է հանդիսանում փայտը,

5 ☐ Այլ - Եթե օգտագործվում է վառելիքի մեկ այլ տեսակ, քան թվարկվածները:

Բ. 7
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

1 ☐ Ջրմուղ բնակելի միավորում - Եթե ջրաբաշխիչ ծորակը գտնվում է բնակելի միավորի ներսում, այսինքն այն միացված է ջրամատակարարման կենտրոնական ցանցին,

2 ☐ Ջրմուղ շենքում, բայց ոչ բնակելի միավորում - Եթե շենքում կա ջրաբաշխիչ ծորակ, բայց առանձին բնակելի միավորներին ջուր չի հասնում և առանձին տնային տնտեսություններ ջրի ծորակից օգտվում են ընդհանուր հիմունքներով,

3 ☐ Հասարակական ջրմուղ - Եթե բակում կամ մոտակայքում կա ջրաբաշխիչ ծորակ, բայց ջուրը տուն(շենք) չի հասնում և բնակիչները ջրից օգտվում են հասարակական հիմունքներով,

4 ☐ Ջրակուտակման անհատական բաք - Եթե տնային տնտեսության ջրամատակարարման հիմնական աղբյուրը ջրակուտակման անհատական բաքն է,

5 ☐ Գետերից, աղբյուրներից - Եթե տնային տնտեսությունը ջրից օգտվելու իր պահանջները բավարարում է անմիջականորեն գետերի, աղբյուրների ջուրն օգտագործելով,

6 ☐ Այլ - Մնացած բոլոր չթվարկված դեպքերի համար:

Բ. 8
ԱՌԿԱ՞Մ Է ԱՐԴՅՈՔ ԼՈԳԱՐԱՆ ԿԱՄ ՑՆՑՈՒՂ

1 ☐ Այո, բնակելի միավորում - Եթե բնակելի միավորում տեղակայված է առանձին լոգասենյակ կամ տեղադրված է ջրացնցուղ՝ անկախ տաք ջրամատակարարման եղանակից (կենտրոնացված ձևով, միջբնակարանային ջրաջեռուցիչ, ներառյալ նաև փոքրածավալ ջեռուցիչ կաթսաները՝ գազի, փայտի): Ընդ որում, այն բնակելի միավորը, որում բացակայում է կոյուղին, լոգարանով կամ ցնցուղով սարքավորված չի համարվում,

2 ☐ Այո, շենքում, բայց ոչ բնակելի միավորում - Եթե շենքում կա լոգարան կամ ցնցուղ, բայց տվյալ բնակելի միավորում այն բացակայում է,

3 ☐ Այո, շենքից դուրս - Եթե տնային տնտեսությունն օգտվում է շենքից դուրս գոյություն ունեցող լոգարանից կամ ցնցուղից,

4 ☐ Այլ - Եթե հարցվողն այս նպատակի համար օգտվում է այլ միջոցներից, բացի վերը թվարկվածներից (օրինակ՝ հաճախում է հասարակական բաղնիք, օգտվում է բարեկամների, հարազատների, ծանոթների հարմարություններից):

Բ.9
ԱՌԿԱ՞Մ Է ԱՐԴՅՈՔ ՋՈՒԳԱՐԱՆ

Ողողվող

1 ☐ Բնակելի միավորում - Եթե բնակելի միավ որը սարքավորված է կոյուղուն հարմարեցված ողողվող (ջրամատակարարում ունեցող) զուգարանով,

2 ☐ Բնակելի միավորից դուրս, միայն տվյալ տնային տնտեսության համար - Եթե շենքում կա ողողվող զուգարան և այն նախատեսված է միայն տվյալ տնային տնտեսության օգտագործման համար,

3 ☐ Բնակելի միավորից դուրս, ընդհանուր օգտագործման համար, - Եթե զուգարանը գտնվում է շենքից դուրս և նախատեսված է ընդհանուր օգտագործման համար:

Չողողվող

4 ☐ Միայն տվյալ տնային տնտեսության համար - Եթե զուգարանը միացված չէ կոյուղուն և դրանից օգտվում է միայն տվյալ տնային տնտեսությունը,

5 ☐ Ընդհանուր օգտագործման համար - Եթե զուգարանը միացված չէ կոյուղուն, գտնվում է շենքից դուրս և նախատեսված է ընդհանուր օգտագործման համար,

6 ☐ Այլ - Մնացած բոլոր դեպքերում:

Բ. 10
ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒՄԸ

Շենքի աղբատար խողովակով

1 ☐ Կանոնավոր հեռացվող - Եթե աղբը թափվում է տվյալ շենքի աղբատար խողովակը, և աղբահանումը կատարվում է ամեն օր կանոնավոր ձևով,

2 ☐ Անկանոն հեռացվող - Եթե աղբը թափվում է շենքի աղբատար խողովակը, սակայն այն հեռացվում է անկանոն ձևով՝ ժամանակ առ ժամանակ:

Այլ ճանապարհով

3 ☐ Թափվում է կանոնավոր հեռացվող աղբարկղը - Եթե աղբը թափվում է շենքից դուրս (անկախ հեռավորությունից) տեղադրված աղբարկղը, որի հեռացումը կատարվում է կանոնավոր ձևով,

4 ☐ Թափվում է անկանոն հեռացվող աղբարկղը - Եթե աղբը թափվում է շենքից դուրս (անկախ հեռավորությունից) տեղակայված աղբարկղը, սակայն սանմաքրման ծառայության կողմից այն հեռացվում է անկանոն ձևով,

5 ☐ Այլ - Մնացած բոլոր դեպքերի համար:

Բ. 11
Ո՞ՐՆ Է ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

1 ☐ էլեկտրականութուն -էլեկտրահաղորդալարերի ցանցի առկայության դեպքում,

2 ☐ Այլ - Մնացած բոլոր դեպքերի համար:

Բ.12
ՈՒՆԵ՞Ք ԱՐԴՅՈՔ ՀԵՌԱԽՈՍ

Բնակելի միավորում հեռախոսի առկայության դեպքում գծանշվում է «այո» պատասխանին համապատասխանող վանդակը, իսկ եթե հեռախոսը բացակայում է տվյալ բնակելի միավորում, ապա՝ «ոչ»-ին համապատասխանող վանդակը:

Ուշադրություն Եթե շինությունում բարեկարգվածության այս կամ այն տեսակը ժամանակավորապես չի գործում (խափանման, վերանորոգման հետևանքով կամ այլ պատճառներով), ապա այդպիսի շինությունը համարվում է բարեկարգվածության տվյալ տեսակով սարքավորված:

Բ. 13

ՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԲՆԱԿԵԼԻ ՄԻԱՎՈՐԸ

1 ☐ Տվյալ տնտեսության անդամի - Եթե բնակելի միավորը պատկանում է տվյալ տնային տնտեսության որևէ անդամին կամ անդամներին՝ քաղաքացու սեփականության իրավունքով,

2 ☐ Պետության - Եթե բնակելի միավորը պետական սեփականություն է,

3 ☐ Համայնքի -Եթե բնակելի միավորը համայնքի սեփականությունն է,

4 ☐ Իրավաբանական անձի - Եթե բնակելի միավորը պատկանում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող որևէ համատիրության, կազմակերպության, տնտեսական ընկերակցության, ընկերության, հասարակական միավորումների, հիմնադրամների,

5 ☐ Այլ անձանց - Եթե բնակելի միավորը սեփականության իրավունքով պատկանում է ոչ թե տվյալ տնային տնտեսության որևէ անդամի, այլ մեկ ուիշի:

Բ.14

ՔԱՆԻ՞ ՍԵՆՅԱԿ)* Է ԶԲԱՂԵՑՆՈՒՄ ՁԵՐ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

---

* *Սենյակը՝ տան, բնակարանի, հանրակացարանի մի մաս է, որը մյուս մասերից անջատված է խուլ պատերով և միջնորմներով և նախատեսված է բնակվելու, հանգստի, արտադասարանային պարապմունքների համար (հանրակացարաններում, մանկատներում և այլն):*

- *Ձեղնահարկերը, կիսավերնահարկերը, տաքացվող պատշգամբները և ծածկապատշգամբները (վերանդա), որոնք սարքավորված են և պիտանի են ամբողջ տարվա ընթացքում ապրելու համար, համարվում են սենյակներ:*
- *Բնակելի սենյակների քանակի մեջ չեն մտցվում՝ խոհանոցները, նախասրահները, միջանցքները, լոգասենյակները, մառանները, նկուղները, բնակարանի ու հանրակացարանի օժանդակ այլ շինությունները:*

Օրինակ՝ Եթե մեկ բնակելի միավորում, որն ունի 3 բնակելի սենյակ, համատեղ բնակվում են երկու տնային տնտեսություններ և նրանցից յուրաքանչյուրը զբաղեցնում է 1-ական սենյակ, իսկ 3-րդ սենյակն ընդհանուր օգտագործման համար է, ապա նրանցից յուրաքանչյուրի համար կազմված հարցաթերթի տնային տնտեսության բնակության պայմանները բաժնի Բ.14. հարցը լրացվում է հետևյալ կերպ՝

Առանձին՝ 1

Այլ տնային տնտեսությունների հետ համատեղ՝ 1:

Ընդ որում, այդ երկու տնային տնտեսությունների համար կազմված հարցաթերթերի հասցեամասում բնակելի մավորի հերթական համարը նույնը պետք է լինի (տես էջ 21):

Եթե տնային տնտեսությունը զբաղեցնում է ոչ թե ամբողջ բնակելի սենյակը, այլ միայն դրա մի մասը, ապա գրվում է՝

Առանձին՝ 0

Այլ տնային տնտեսությունների հետ համատեղ՝ 1:

Եթե տվյալ բնակելի միավորը զբաղեցված է միայն մեկ տնային տնտեսության կողմից, ապա սենյակների քանակը ցույց կտրվի *«Առանձին»* տողում, իսկ *«Այլ տնային տնտեսությունների հետ համատեղ» տողում կգրվի 0:*

Բ.15

ՈՐՔԱՆ Է ՁԵՐ ԲՆԱԿԵԼԻ ՄԻԱՎՈՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ (ՔԱՌ.Մ)

Նշվում է ընդհանուր և բնակելի մակերեսի չափը: Մակերեսի չափը գրվում է ամբողջական քառակուսի մետրերով, առանց տասնորդական նիշերի: Գրառումը կատարվում է թվերով՝ (օրինակ՝ 5, 13, 44, 105 և այլն) դրա համար հատկացված հատուկ վանդակում:

Անհատական տան, առանձին կամ ընդհանուր (կոմունալ) բնակարանի *ընդհանուր մակերեսը* որոշվում է բոլոր բնակելի սենյակների և օժանդակ շինությունների (խոհանոցների, նախասենյակների, լոգարանների կամ ջրացնցուղների, մառանների) մակերեսների հանրագումարով՝ ներառյալ կառուցված պահարանների, նախասրահների, ներբնակարանային միջանցքների մակերեսը:

Հանրակացարաններում և կոմունալ բնակարաններում բնակվողներին բաժին ընկնող ընդհանուր մակերեսը որոշվում է որպես տնային տնտեսության կողմից զբաղեցրած բնակելի մակերեսի և հանրակացարանի օժանդակ շինությունների ամբողջ մակերեսից նրանց բաժին ընկնող մասի գումարով:

Հանրակացարանների համար օժանդակ շինությունների մակերեսից մեկ մարդուն բաժին ընկնող մակերեսի չափը որոշվում է տվյալ հանրակացարանի օժանդակ շինությունների ամբողջ մակերեսը՝ մահճակալ/տեղերի թվի վրա բաժանելու միջոցով:

Օրինակ՝ եթե հանրակացարանի օժանդակ շինությունների մակերեսը կազմում է 506 քառ.մ, իսկ մահճակալ/տեղերի թիվը հավասար է 103-ի, ապա մեկ մարդուն բաժին է ընկնում օժանդակ շինությունների 5 քառ.մ (4,913 քառ.մ, որը կլորացվում է):

Ընդհանուր մակերեսի մեջ չի մտցվում՝ աստիճանավանդակների, նախասրահների, սրահների, նախամուտքերի, դուրս ցցված կառուցվածքային տարրերի և ջեռուցիչ վառարանների զբաղեցրած, չտաքացվող կից կառուցված շինությունների (պատշգամբ, ծածկապատշգամբ, ձեղնահարկ, սյունազարդ պատշգամբ, կիսավերնահարկ), առանձնացված ամառային խոհանոցների, բաղնիքների, ցախատների, տաղավարների և այլնի մակերեսը:

Հանրակացարանների, ծերանոցների ընդհանուր մակերեսի մեջ չեն մտցվում նաև պարետների և սպասարկող անձնակազմի ծառայողական սենյակների, դաստիարակների սենյակների և կենցաղ սպասարկման (ընդունման կետ, վարսավիրանոց, առևտրի կրպակ), մասսայական միջոցառումների համար շինությունների (սպորտային դահլիճ), բժշկական կետի մակերեսը:

Բնակելի մակերեսի մեջ մտցվում է տնային տնտեսության զբաղեցրած բնակելի բոլոր սենյակների մակերեսը՝ չհաշված ներկառուցված պահարանների մակերեսը: Եթե տնային տնտեսությունը զբաղեցնում է սենյակի մի մասը, ապա անհրաժեշտ է նշել այն մակերեսը, որը բաժին է ընկնում այդ տնային տնտեսությանը սենյակի ամբողջ տարածությունից (*օրինակ՝ եթե հանրակացարանում 15 քառ.մ տարածությամբ սենյակում բնակվում են 3 մարդ և նրանցից յուրաքանչյուրն առանձին տնային տնտեսություն է, ապա նրանցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում 5 քառ.մ*):

Եթե տնային տնտեսությունը զբաղեցնում է մակերեսի միայն մի մասը, իսկ մնացած մասը վարձով է տալիս, ապա նշվում է տվյալ տնային տնտեսությանը պատկանող ինչպես ընդհանուր, այնպես էլ բնակելի մակերեսի ամբողջ չափը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ՕԺԱՆԴԱԿ ԱՂՅՈՒՍԱԿ

2001թ. հոկտեմբերի 10-ի դրությամբ ծննդյան հայտնի տարեթվով տարիքը՝ լրացած տարիներով որոշելու համար

Վերջին ցմկնցմը	Այն անձանց տարիքը՝ լրացած արիներով, որոնք ծնվել են		Վերջին ցմկնցմը	Այն անձանց տարիքը՝ լրացած արիներով, որոնք ծնվել են		Վերջին ցմկնցմը	Այն անձանց տարիքը՝ լրացած արիներով, որոնք ծնվել են	
	հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 9-ը ներառյալ	հոկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ		հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 9-ը ներառյալ	հոկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ		հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 9-ը ներառյալ	հոկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ
2001	0	-	1957	44	43	1913	88	87
2000	1	0	1956	45	44	1912	89	88
1999	2	1	1955	46	45	1911	90	89
1998	3	2	1954	47	46	1910	91	90
1997	4	3	1953	48	47	1909	92	91
1996	5	4	1952	49	48	1908	93	92
1995	6	5	1951	50	49	1907	94	93
1994	7	6	1950	51	50	1906	95	94
1993	8	7	1949	52	51	1905	96	95
1992	9	8	1948	53	52	1904	97	96
1991	10	9	1947	54	53	1903	98	97
1990	11	10	1946	55	54	1902	99	98
1989	12	11	1945	56	55	1901	100	99
1988	13	12	1944	57	56	1900	101	100
1987	14	13	1943	58	57	1899	102	101
1986	15	14	1942	59	58	1898	103	102
1985	16	15	1941	60	59	1897	104	103
1984	17	16	1940	61	60	1896	105	104
1983	18	17	1939	62	61	1895	106	105
1982	19	18	1938	63	62	1894	107	106
1981	20	19	1937	64	63	1893	108	107
1980	21	20	1936	65	64	1892	109	108
1979	22	21	1935	66	65	1891	110	109
1978	23	22	1934	67	66	1890	111	110
1977	24	23	1933	68	67	1889	112	111
1976	25	24	1932	69	68	1888	113	112
1975	26	25	1931	70	69	1887	114	113
1974	27	26	1930	71	70	1886	115	114
1973	28	27	1929	72	71	1885	116	115
1972	29	28	1928	73	72	1884	117	116
1971	30	29	1927	74	73	1883	118	117
1970	31	30	1926	75	74	1882	119	118
1969	32	31	1925	76	75	1881	120	119
1968	33	32	1924	77	76	1880	121	120
1967	34	33	1923	78	77	1879	122	121
1966	35	34	1922	79	78	1878	123	122
1965	36	35	1921	80	79	1877	124	123
1964	37	36	1920	81	80	1876	125	124
1963	38	37	1919	82	81	1875	126	125
1962	39	38	1918	83	82	1874	127	126
1961	40	39	1917	84	83	1873	128	127
1960	41	40	1916	85	84	1872	129	128
1959	42	41	1915	86	85	1871	130	129
1958	43	42	1914	87	86	1870	131	130

Հավելված 2

Օ Ժ Ա Ն Դ Ա Կ Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ

միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն չստացած անձանց կրթական մակարդակը որոշելու (ավարտած դասարանների թվով զուգորդված)

Հանրակրթական դպրոցի ո՞ր դասարանն է ավարտել կամ ո՞ր դասարանում է սովորում	*Կրթության մակարդակը դասարանների տվյալ թվին համապատասխան*
Ավարտել է՝	
-7- ամյա դպրոց 1961թ.և ավելի վաղ	ընդհանուր հիմնական
-8-ամյա դպրոց 1962-1989թթ.	-"-
-9-ամյա դպրոց 1990-1992թթ.	-"-
-ընդհանուր հանրակրթական դպրոց 1993թ.և հետո	-"-
-11-ամյա միջնակարգ դպրոցի 9-րդ,10-րդ դասարան	-"-
-10-11-րդ դասարանների սովորողներ	-"-
Սովորում է՝	
-պրոֆտեխուսումնարանում (բացի ընդհանուր(լրիվ) միջնակարգ կրթություն ունեցող անձանցից)	-"-
Դուրս է մնացել՝	
-8-րդ դասարանից 1961/62թթ	-"-
-9-րդ դասարանից 1988/89թթ և ավելի վաղ	-"-
-պրոֆտեխուսումնարանից (բացի ընդհանուր(լրիվ) միջնակարգ կրթություն ունեցող անձանցից)	-"-
Ավարտել է՝	
-1972թ. և ավելի ուշ տարրական դպրոցը կամ 3-րդ դասարան	տարրական
-ցանկացած տարում 4-6-րդ դասարաններ	-"-
-1962թ.և ավելի ուշ 7-րդ դասարան	-"-
-1992թ.և ավելի ուշ 4-րդ դասարան	-"-
Սովորում է՝	
-4-8-րդ դասարաններում	-"-
Դուրս է մնացել՝	
-1972/73 ուս. տարում և ավելի ուշ 4-րդ դասարանից	-"
-ցանկացած տարում 5-7-րդ դասարաններից	-"-
-1962/63 ուս.տարում և ավելի ուշ 8-րդ դասարանից	-"-
Չի ավարտել տարրական դպրոցը	չունի տարրական
Ավարտել է՝	
-հետհեղափոխական դպրոցի 1,2-րդ դասարանները	-"-
-դպրոցի 1,2-րդ դասարանները մինչև 1972թ.	-"-
Սովորում է 1-3 դասարաններում	-"-
Դուրս է մնացել՝	
-հետհեղափոխական դպրոցի 1-3-րդ դասարաններից	-"-
-1971/72 ուս.տարում և ավելի վաղ 4-րդ դասարանից	-"-

Հավելված 3

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 26.07.2001թ. № 59 որոշմամբ

Ձև 4

ՀՍԿԻՉ ԹԵՐԹ № .....

Որտեղ է կազմվել՝

Մարզ ..... Տարածք .....

Համայնք ..... Քաղաք/գյուղ .....

Տան/շենքի համարը (համարի բացակայության դեպքում) .....

Տանտիրոջ ազգանունը

Բնակարանի համարը .....

Մարդահամարի տեղամաս ___

Հրահանգչական տեղամաս ___

Հաշվային տեղամաս ___

Կազմելու ամսաթիվը՝ __.__.__

ա)2001թ. հոկտեմբերի 9-ի լույս 10-ի 00-ին գտնվել է տվյալ հասցեում (նշել) Այո ☐ Ոչ ☐

բ)Հսկիչ թերթի կազմման հետ մեկտեղ մտցված է մարդահամարի հարցաթերթում՝ բացակայության մասին նշումով (նշել) Այո ☐ Ոչ ☐

Նշել ☑

1.Ազգանուն,անուն,հայրանուն	
2.Մշտական բնակության վայրը (հասցեն)	
3.Ձեր սեռը	☐ Արական ☐ Իգական
4.Ձեր ծննդյան	օրը ☐☐ ամիսը ☐☐ տարին ☐☐☐☐ Տարիքը՝ լրացած տարիներով ☐☐☐
5.Ձեր ծննդավայրը (Հայաստանի դեպքում մարզը և բնակավայրը այլ դեպքում երկիրը)	
6.Ձեր ամուսնական վիճակը	1 ☐ Երբեք չամուսնացած 2 ☐ Ամուսնացած(գրանցված) 3 ☐ Ամուսնացած փաստացի (առանց գրանցման) 4 ☐ Ամուսնացած,սակայն առանձին ապրող 5 ☐ Այրի,կենակցություն 6 ☐ Ամուսնալուծված(գրանցված) 7 ☐ Ամուսնալուծված փաստացի (առանց գրանցման)
7.Ձեր ազգությունը	
8.Ձեր մայրենի լեզուն և այլ լեզու, որին ազատ տիրապետում եք	
9.Ձեր քաղաքացիության երկիրը	
10.Ձեր գիտական աստիճանը կամ կրթությունը (7 և բարձր տարիքի անձանց համար)	1 ☐ Գիտությունների դոկտոր 2 ☐ Գիտությունների թեկնածու 3 ☐ Հետբուհական մասնագիտական 4 ☐ Բարձրագույն մասնագիտական 5 ☐ Թերի բարձրագույն 6 ☐ Միջին մասնագիտական 7 ☐ Նախնական մասնագիտական 8 ☐ Ընդհանուր միջնակարգ 9 ☐ Ընդհանուր հիմնական 10 ☐ Ընդհանուր տարրական 11 ☐ Չունի տարրական

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

2001

11.Տարրական կրթություն չունեցողների համար՝ տառաճանա՞չ եք	☐ Այո ☐ Ոչ
12.Սովորու՞մ եք որևէ ուսումնական հաստատությունում	Եթե այո» 1☐ Հետբուհական 2☐ Բարձրագույն 3☐ Միջին մասնագիտական 4☐ Հանրակրթական 5☐ Լրացուցիչ կրթություն 6☐ Եթե ոչ»
13.Ձեր գոյության միջոցների աղբյուրները Հիմնական ▶ Ա Երկրորդային ▶ Բ	Ա Բ 1☐☐ Աշխատանք (բացառությամբ անձնական տնտեսությունում) 2☐☐ Աշխատանք անձնական տնտեսությունում 3☐☐ Եկամուտ սնվիկանությունից 4☐☐ Կրթաթոշակ 5☐☐ Կենսաթոշակ 6☐☐ Նպաստ (բացի գործազրկության նպաստից) 7☐☐ Գործազրկության նպաստ 8☐☐ Պետական ապահովության (պահպանության) ներքո 9☐☐ Այլ դրամական օգնություն (պետական աղբյուրներից) 10☐☐ Դրամական օգնություն (ոչ պետական աղբյուրներից) 11☐☐ Ճամբի տակ 12☐☐ Այլ աղբյուր

Հասցեն, որտեղ տվյալ անձը պետք է հաշվեգրվի որպես մշտապես կամ ժամանակավորապես բնակվող

Մարզ _____ Տարածք _____ Համայնք _____

Քաղաք/գյուղ _____ Պողոտա/Փողոց/Նրբանցք _____

Տան/շենքի համարը
(համարի բացակայության դեպքում) _____ Բնակարանի համարը _____
Տանտիրոջ ազգանունը

Ստուգման արդյունքների մասին

(հսկիչ թերթը կազմելիս չի լրացվում)

Տվյալ անձը՝

ա) նախկինում հաշվեգրվել է №___մարդահամարի հարցաթերթում

բ) չի հաշվեգրվել և.ստուգումից հետո մտցվել է №___ մարդահամարի հարցաթերթում

գ) չի բնակվում նշված հասցեում ☐
/հշել/

դ) այլ դեպքեր _____
/հշել/

Մարդահամարի տեղամաս ___

Հրահանգչական տեղամաս ___

Հաշվային տեղամաս ___

Ստուգողի ստորագրությունը _____ Ստուգման ամսաթիվը _____

Հավելված 4

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի 26.07.2001թ. № 59 որոշմամբ

Հավելված 4
Ձև 5

ՏԵՂԵԿԱՆՔ №

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

2001

Քաղաքացի .....
/Ազգանուն,անուն,Հայրանուն/

Ծննդյան տարեթիվը .....

Անցել է 2001թ.մարդահամար

Հաշվարար ....
/Անուն,ազգանուն/ / ստորագրությունը/

Տեղեկանքը ծառայում է միայն ՀՀ 2001թ. մարդահամարի ընթացքում բնակչության ճշգրիտ հաշվառման համար: Խնդրվում է սույն տեղեկանքը պահել անմիջականորեն Ձեր մոտ՝մինչև 2001թ. հոկտեմբերի 25-ը

Հավելված 5

Ձև 6

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի 26.07.2001թ. № 59 որոշմամբ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ №.....

(լրացվում է մարդահամար անցած և մեկ այլ տուն (բնակարան) ունեցողի համար)

Մշտական բնակության հասցեն, որտեղ տվյալ անձն անցել է մարդահամար

Մարզ ..... Տարածք .....

Համայնք ..... Քաղաք/գյուղ .....

Տան/շենքի համարը
(համարի բացակայության դեպքում) .....

Տանտիրոջ ազգանունը

Բնակարանի համարը .....

Մարդահամարի տեղամաս ☐☐

Հրահանգչական տեղամաս ☐☐

Հաշվային տեղամաս ☐☐

Կազմելու ամսաթիվը՝ ☐☐ ☐☐ ☐☐☐☐

Ազգանուն,անուն,հայրանուն	
Ձեր սեռը՝	☐ Արական ☐ Իգական
Ձեր ծննդյան	օրը ☐☐ ամիսը ☐☐ տարին ☐☐☐☐ Տարիքը՝ լրացած տարիներով ☐☐☐

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

2001

ՀՀ քաղաքացի _____ արդեն անցել է մարդահամար
/Ազգանուն,ա.հ./
և պետք չէ հաշվառել նրան հետևյալ հասցեում

_____ Տարածք _____ Համայնք _____

Քաղաք/գյուղ _____ Պողոտա/Փողոց/Նրբանցք _____

Տան/շենքի համարը
(համարի բացակայության դեպքում) _____ Բնակարանի համարը _____
Տանտիրոջ ազգանունը

Տվյալ հասցեով ստուգման արդյունքները

(փաստաթղթի կազմման ժամանակ չի լրացվում)

Տվյալ անձը՝

ա) №____տան/շենքի մարդահամարի հարցաթերթում չի հայտնաբերված
բ) հայտնաբերված է №____տան/շենքի մարդահամարի հարցաթերթում,
բայց ստուգումից հետո հանված է բոլոր մարդահամարի փաստաթղթերից
գ) այլ դեպք _____
/նշել/

Մարդահամարի տեղամաս

Հրահանգչական տեղամաս

Հաշվային տեղամաս

Ստուգողի ստորագրությունը _____ Ստուգման ամսաթիվը_____